

Խ. Տ. ԱՎԱԳՅԱՆ

ՄԵՂՈՒՆԵՐԻ
ԱՃԱՆ ՈՒ ԶՄՈԱՆ
ԽՆԱՄՔԸ

638.1
Խ-37

ԳՅՈՒՂՂՐԱՑ

1936

ՅԵՐԵՎԱՆ

五國書平川上 U.S.A.

Ա. Տ. ԱՎԱԳՅԱՆ

24 SEP 2010

ՑԱՆԿ

Ա. Մեղվանոցային աշխատանքներն ազնուն ընթացքում	3
Բ. Հանգստի կացություն	24
Գ. Զանազան հանդամակների պահեցությունը հանգստի կացություն վրա	32
Դ. Մեղսւների ձևեւելու յերկու յեզանակ	49
Ե. Մեղսւների ձևեւելը դրսում	54
Զ. Ջեռոց	59
Կ. Մեղսւների ինսերը և հակագությունը ձևեւուրում	68

$$\frac{638}{\sqrt{n} - 37}$$

- 37

۲۰۷

۲۰۷

ՅՈՒՂԱՐԱՑ

1930

ՕԵՐԵՎԱՆ

□ □ □

Ա. ՄԵՂՎԱՆՈՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՇԽԱՆՔ

Գլխավոր մեղրաբերքը վերջանալուց հետո մինչև ուշ աշուն՝ մինչև ցրտելն ընկնելը՝ մեղվի ընտանիքն զգալի շափով նվազում է:

Նվազման պատճառն այն է, վոր գլխավոր մեղրաբերքը սկսվելիս մեղուների մեջ զարթնում և ծալրահեղորեն լարվում ե կուտակման բնազդը, և, ընդհակառակը՝ նվազում ե վորդի խնամատարության բնազդը: Մեղուները մեծ քանակությամբ մեղր են բերում դաշտից և անխտիր լցնում բջիջները, մինչև խեկ ընի կենտրոնական մասը. զրա շնորհիվ մայրը զրկվում ե ազատ կերպով ձվարկելուն արագորությունից, և այսպիսով ձվարկությունը խիստ սահմանափակվում է: Դրա հետեանքով, մեղրաբերքի վերջում, նոր յելնող մեղուների թիվը քիչ է, մինչդեռ ընտանիքի որվա կորուստը՝ մեծ. շնորհիվ այս բանի, աշխատավոր մեղուների թիվը որսուրե պակասում է: Այսուհետեւ վորդուձուն միեթակում ել ավելի յե քչանում և վերջապես իսպառ վերանում: Ուրեմն և նոր յելնող մեղուների թիվը դրա համեմատ քչանում ե և վերջապես լելքը բոլորովին դադարում է, մինչդեռ մեղուների կորուստը շարունակվում է: Մեղրաբերքի վերջում բռները հալածանքի և վոչնչացման են մասնվում, զրա շնորհիվ նույնակես ընտանիքի կազմը կրծատվում է:

Այսպիսով այն ընտանիքներում, վորոնք բերքի սկըզբում ունենում են 50—60 հազար մեղու և 30—34 հա-


զար վորդուձու, ուշանանը լինում ե 15—20 հազար մեղու-
առանց վորդուձվի և բոռերի: Զպետք ե կարծել, թե ըն-
տանիքի աշխանային նվազումն աննորմալ և վսասակաբ-
լերենույթ ե. ընդհակառակը՝ դա մի միջոց ե, վորի շնոր-
հիվ ընտանիքը կրծատում ե ուստողների թիվը այն ժամա-
նակ, իերք աշխատանք չկա և պահպանում ե աշխատա-
վորների այն նվազագույն քանակը, վորն անհրաժեշտ ե
ընտանիքին գարնանը հաջող գարգանալու համար. այս
կերպ նա խնալում ե իր պաշարը:

Սակայն շնորհիվ այլևայլ հանգամանքների, ընտանի-
քը կարող ե չափից ավելի նվազել. այդպիսի աննորմալ
նվազման հետևանքն այն կինի, վոր ընտանիքը հետվլու
գարնանն ի վիճակի չի լինի հաջող կերպով գարգանալու-
ուստավելագույն արդյունք տալու:

Ուստի և մեղվապահը պետք ե զեկովարի ընտանիք-
ների աշխանային նվազման պրոցեսը՝ ապահովելով նրանց
աննորմալ նվազումից: Ահա թե ինչպես կարելի է այդ
իրադրժել:

1. **Մեղվի ընտանիքներն աշխանային աննորմալ նվա-**
զումից ապահովելու առաջն և ամենակարևոր քայլերը
մեղվապահը պիտի անի դեռ զլսավոր մեղրաբերքի ըն-
թացքում: Նա պետք ե զլսավոր մեղրաբերքի ընթացքում
ընտանիքի բնակարանը համապատասխան կերպով լայ-
նացնի, մեղուներին ըստ պահանջի չեց և մոմաթերթ տա,
հասունացած մեղը պարբերաբար փեթակից հանի, վոր-
զեսզի մեղուներն ազատ կերպով կարողանան կառուցելը
դաշտից բերած մեղըն առանց հապաղման տեղավորել
բջիջների մեջ և դրա հետ միասին ազատ կերպով դաստ-
վորվել փեթակում այն որինաչափություններով, վոր նը-
րանցում մշակվել և ամրացել են իրենց տեսակալին գար-
գացման պատմական պրոցեսում: Յեթե մեղվապահն ըն-

տանիքի այդ պահանջը լիովին բավարարել ե, ուրեմն
բերքի ընթացքում ձգարկությունն աննորմալ կերպով
չի սահմանափակվի, կծիկի, մեղրապահարի, ծաղկափոշու-
նի վորդուձվի դասավագությունը կհամապատասխանի մե-
ղուների կենսական պահանջներին, և բերքից հետո ըն-
տանիքի նվազումը կընթանա որինաչափ ու նորմալ կեր-
պով:



Նկ. 1. Մեղրի, մեղուների և վորդուձվի դասավագությունը փեթակում՝ գտ-
նակը մեղրաբերքի վերջին: Հետագայում կծիկը դասավորվում է դաստի-
քը բջիջների վրա, վորտեղ բերքի վերջին վորդուձուն ե:

Այդ դեպքում մեղրաբերքի վերջում՝ ընտանիքը կդա-
սավորվի այնպես, ինչպես այդ ցուց ե տրված նկ. 1-ում:

2. **Մեղրաբերքի վերջում մեղվապահը մեղուների հա-**
**մար պետք ե թողնի պաշարի անհրաժեշտ քանակ և ավե-
րդ մեղը վերցնի վորպես արդյունք:**

Այստեղ, ահա, նա պետք ե վորոշի մի շատ կարեար
խնդիր, քե վորման պահար պետք ե բողնել ընտանիքին:
Պետք ե ասել, վոր այդ մի ցավոտ խնդիր ե մեր կու-

անտեսային ու խորհանտեսային մեղվանոցների համար մեր մեղվաբուծական արդյունաբերությունը, զոնք Հայաստանում, պաշարի քանակի մասին վորոշ, կայուն տեսակետ չունի, չկա մի կայուն նորմա, վորը պարտադիր միներ թե արտադրող մեղվապահի, թե կոլտնտեսության կամ խորհանտեսության վարչության և թե մեղվաբուծությունը միավորող ու զիմավորող որդանների համար Յեթե տարին անհաջող ե յեղել, յեթե արտադրական աշխատանքը կանոնավոր կազմակերպված չի յեղել և դրա չնորհիվ արտադրանքի պլանը չի կատարվել, մեղվաբերքի վերջում սկսում են ընտանիքներին պլոկել դա առաջին քայլն ե, վոր խստ կերպով ազգում ե հետևյալ տարրավա աշխատանքի արդյունքների փրա և քայլացում ե մեր մեղվաբուծական տնտեսությունները։ Մենք այստեղ ամենայն վճռականությամբ պետք ե շեշտենք, վոր առաջիկա տարրվա պլանային ցուցանիշների մեջ տուաջին տեղը պետք ե բռնի վոչ թե մեղրի և մոմի արտադրանքը, այլ պաշարի այն անհրաժեշտ նվազագույնը, վորը լիովին կարող ե ապահովել ընտանիքների աշխանային նորմալ դրույունը, հաջող ձմեռումը և առաջիկա գարնանը նրանց հաջող գարգացումը։

Ամերիկան մեղվաբուծության հիմքում դրված ե մի առողջ սկզբունք, վորի համաձայն լուրաքանչյուր ընտանիքի պետք ե թողնել 20—22 կգ մեղր։ Ֆիլիպսը „Պատուածտեաւություն“ ամսագրում տպագրված մի հողվածում նշել ե, վոր խորհրդային մեղվաբուծության ամրապնդման համար անհրաժեշտ ե, վոր նա յուր արտադրական պրակտիկայում ընդունի այդ նորման։

Առաջին առարկությունը, վոր կարող ե արկել այդ նորմայի դեմ այն ե, վոր բոլոր ընտանիքները հավասար ուժի չեն. ուժեղ ընտանիքներին գուցե պետք ե թողնել

ալղքան, բայց թուլերի համար այղքան պաշարն ավել լորդ ե։

Այդ առարկության առթիվ մենք կասեյինք, վոր թույլ ընտանիքների գաղափարն այս տեղ բերվում է վորպես մեր պրակտիկայում ընդունված և սրբազործված իրողություն։ Բայց բույլ ընտանիքներ չպես ե լինեն։ Մերարեցի վերջում բոլոր ՏԵՂԵՐՈՒՄ յեվ բոլոր ՏԵՏԵՎՈՒՐՅՈՒՆՆԵՐՈՒՄ պես ե լինեն լիարձեք, խոռոր ընտանիքներ։

Մյուս կողմից՝ անհրաժեշտ ե նշել, վոր յեթե վորև գեղքում, վորպես կոնկրետ փաստ, մեղվանոցի 50 տոկոսը լիարժեք ընտանիքներ չեն, ապա հետևյալ տարին հնարավոր ե նրանց լիարժեք ընտանիքներ դարձնել և պետք ե դարձնել, իսկ դրա համար նրանց պետք ե հատկացնել վոչ թե այնքան պաշար, վորքան անհրաժեշտ ե, վոր նրանք միայն իրենց գոյությունը քաշ տան, այլ վորքան անհրաժեշտ ե, վոր նրանք լիարժեք ընտանիքներ գառնան և լրիվ արտադրանք տան։ Իսկ դրա համար անհրաժեշտ ե թողնել ընտանիքներին վոչ թե այնքան ըըրջանակ պաշար, վորքան նրանք պատում են, այլ, բացի գրանից, ևս մի քանի մեղրով շըջանակ, վորոնք հետևյալ գարնանը տրվում են ընտանիքներին, յեթե նրանք սկսում են աճել։

Իսկ յեթե մեր մեղրի յեկամուտը՝ մեր անշնորհքության կամ տարրվա աննպաստ յեղանակների պատճառով քիչ ե յեղել, ապա այդ պակասն ի հաշիվ մեղուների պաշարի չի, վոր պիտի լրացնենք։ Այդ նրոյնքան անհեթեթ ե, վորքան անհեթեթ կլիներ, յեթե մի կաթնատնտեսական խորհանտեսության մեջ իրենց գեֆիցիտն ուղենային լրացնել կուերի և մանավանդ հորթերի կերպարաժինները 50—70⁰/օով կրծատելով։

Գուցե մենք հնարավորություն չունենանք միանգա-


մից 20—22 կզ վորպես նորմա անցկացնել մեր արտա-
դրության մեջ, բայց վորպես նվազագույն նորմա, հենց
ուսաշիկա սեղոնից պետք ե ընդունենք վոչ պակաս քան
16 կգ։ Հողժողկոմատում ընդունված զոկանոնների հա-
մաձայն, մեր յերկրի լեռնային մասերում պետք ե թող-
նել ընտանիքներին 14—16 կգ. իհարկե, ցանկալի յե ձըդ-
աել այս նորմայի առավելագույնին (16 կգ)։ Ըստ նույն
զոկանոնների՝ դաշտային մասում բավական ե համար-
գում 12—14 կգ։ Մենք, այնուամենայնիվ, այս տեղերի
համար ել ցանկալի լենք համարում 16 կգ, քանի վար
այստեղ թեպետ ձմեռը կարճատե ե, բայց դարձնը վաղ
ե սկսվում, ուրեմն ընտանիքի զարգացման ժամանակա-
շրջանն ավելի յերկարատե ե և պաշարի կարիքն անհրա-
ժեշտ:

Կոլտնտեսական մեղվապահը՝ վորպես մեղրի քանակի շափանիշ՝ պետք ե ընդունի, վոր մեկ Դ—Բլատի բնի շրջանակը, մինչև տակը սերեկված լինելու դեպքում, պարունակում ե 4 կգ մեղր, իսկ կիսով չափ՝ 2 կգ։ Վորպես ավելի ճիշտ չափ, պետք ե ընդունել, վոր մեկ քառակուսի դեցիմետր կնքած հայը լերկու յերեսում պարունակում ե 400 գրամ մեղր։ Բնի նորմալ շրջանակը պարունակում ե սովորաբար $1\frac{1}{2}$ —2 կգ մեղր։ Ուրեմն՝ յուրաքանչյուր ընտանիքին պետք ե թողնել վոչ պակաս, քան 8—10 ալդպիսի շրջանակ, նայած թե ինչպես են նրանք լցված։

3. Սակայն կարենոր և վոչ միայն պաշարի քանակը, ողին նրա նորմալ դասավորությունը, վոր ցույց և տըր-ված նկար 1-ում. դրա համաձայն, պաշարը պետք և գտավորված լինի կիսակամարի ձևով, շրջանակի վերելի և ճետելի մասում:

Մեղուները պաշտրը գործադրելու վարոշ կարգ ամեն։

Նրանք իրենց կծիկը դաստվորում են սերեկած մեղքի տակ, դատարկ բջիջների վրա (վորոնք մեղրաբերքի վերջում լիքն են լինում վորդուձվով, իսկ հետագայում դատարկվում են): Զմեռվա ընթացքում, հետզհետե ուտելով պաշարը, կծիկը բարձրանում եր դեպի վեր, իսկ լեթե վերևում պաշարն սպաւավում ե, այն ժամանակ կծիկն ուտելով շարժվում ե դեպի լետ: Զի կարելի ասել վորձմուն ընթացքում մեղուները ըրջանակից ըրջանակ բոլորովին չեն անցնում. բայց կծիկը լուր ամբողջութիւնը չետեղափոխվում նոր ըրջանակների վրա. նա սպառելով պաշարն այն շրջանակներում, վորոնց վրա նստած ե, հենց



Նկ. 2. Պաշտպանակո՞րթությունը ԱվՀանակում:

այդտեղ ել սովաման և լինում, թեկուզ փեթակում մյուս
շրջանակները մեղրով լիքը լինեն, չնայած յերբեմն, ի հար-
կե, պատահում ե, վոր, գլխավորապես ձմեռոցի անորո-
ժալ պայմաններում, մեղվի կծիկը քանդվում ե, մեղռ-
ներն անցնում են նաև մյուս շրջանակների վրա և ոգ-
ագործում ամբողջ պաշարը։ Ուրեմն, յեթե դատարկ հա-
ցեր կան, պետք ե վաղորոք հանել վիեթակներից։ Մեղռ-
ներն աշնան ընթացքում ձգտում են դասավորվել հենց
դատարկ հացերի վրա՝ ազատ թաղնելով մեղրով շրջանակ-

Ները. յեթե հացերը ժամանակին չհանեք, մեղուները նըրանց վրա կդասագորեն կծիկը, ցրտերն ընկնելուց հետո դուք այլես կծիկը քանդել և նրանց նորմալ կերպով դասագորել մեղրով հացերի վրա չեք կարող. դրանով այդ ընտանիքների զրությունը կվտանգվի, Ինձ պատահել եմի քանի անգամ դիտել այս պատճառից ձմեռոցում սովամահ յեղած լիարժեք ընտանիքներ։ Այդ տեղի յեւ ունենում մանավանդ այն ժամանակ, յերբ փեթակի մի կեսը մեղրահացեր են, իսկ մյուսը՝ չեչեր։

Յեթե մեղվապահը գիշավոր մեղրաբերքի ընթացքում յուր աշխատանքները զիտակցորեն և ճիշտ ետանում, պաշարի դասագորությունը բերքի վերջում նորմալ կլինիքորպեսպի բնի շրջանակներում մեղրի պահանջված քանակը լինի, նա յուր վերնահարկերը պետք են վերցնի ավելի շուտ, քան բերքը վերջանալը. հակառակ դեպքում մեղուները կարող են վողջ մեղրը դասագորել վերնահարկում և բնի շրջանակները թողնել դատարկ. յեթե դրան խանգարում են վորդով շրջանակները, վորոնք գտնվում են վերի կրոպուտում, ապա այդ շրջանակները պետք է իջեցնել ներքնահարկ, իսկ ներքնահարկով հոռացնել այն շրջանակները, վորոնք վորդուձու չունեն։ Իհարկե, այդպես կարելի յեւ վարվել, յերբ վերի ու վարի շրջանակները հավասար են։

Յերբ մեղվապահը գլխավոր բերքից հետո տեղափոխում են բամբակացան շրջան, նա չպետք են վերցնի վերնահարկերը. ընդհակառակը՝ ոգոստոսի սկզբին բամբակացան շրջան պիտի դա դատարկ վերնահարկով, վորպեսզի մեղուները մեղր կուտակելու տեղ ունենան և չսահմանափակեն վորդուձի խնամատարությունը, վորը մեզ մոռսովրական յերևույթ եւ.

Վերնահարկ չունեցող փեթակների բներում նույն-

պես պիտի ունենալ բավականաչափ դատարկ չեչեր՝ այդ նպատակի համար։


4. Պահարի լրացում. մեղրի նվազագույն քանակը, վոր պիտի լինի շրջանակում, վորպեսզի մեղուները մինչև գարուն հասնեն, կարելի յեւ վորոշել մոտ մի կգ. յեթե ձմեռոց զրվելիս բնի շրջանակներում մեղրի քանակը դրանից պակաս ե, լնտանիքը կարող ե սովամահ լինել հենց ձմեռոցում՝ գարուն չհասած. Բացասիկ զեպքերում, յերբ զրությունն այդպես ե, մեղվապահը պետք ե լրացնի մեղուների պաշարը. Առհասարակ անթուլատքելի յեւ ձմեռոցում փեթակը բանալ և պաշարը լրացնել. այդ պետք ե անել ընտանիքները ձմեռոց գնելուց առաջ. բացարձակուրեն անթուլատքելի յեւ ձմեռոցում պաշարը լրացնել ջրալի կերով (շաքարաջուր): Դժբախտաբար, վերջերս լուրտեհսած „Պամյտկա ուղղութեան“ ձեռնարկում հենց այդպես ե խորհուրդ տրվում. Այդ պետք ե վերապընկ կամ հեղինակների անզիտու թյան, կամ թյուրիմացության։ Ձմեռոցում, յեթե այդ անխուսափելի յեւ զարձել մեղվապահից անկախ պատճառներով, կարելի յեւ տալ կերպարաշաղախ, փսթաթելով թանզիֆի մեջ և դնելով շրջանակների վրա՝ կծիկի զիլին, կամ հաց մեղր, վոր պառկեցնում են նույն տեղում (բաց բնի յերեք շրջանակների արանքում), կամ շաքարի կտորներով։

Կարիքավոր ընտանիքների պաշարը պետք ե լրացնել մինչև նրանց ձմեռոց գնելը և հետեւալ յեղանակներով։

ա. Գլխավոր բերքը վերջանալուց անմիջապես հետո տալ ընտանիքին միջին թանձրության շաքարաջուր (1 մաս ջուր, 1 մաս շաքար) խոշոր բաժիններով (ամեն անգամ 2—4 կիլո շաքարաջուր) և իրար հետեւից, այսինքն՝ յերկու-յերեք զիշերում. իհարկե, տրվող կերի ընդհանուր քանակը կախված ե ընտանիքի կարիքից. Կարելի յեւ նաև

առ թանձր շաքարաջուր (2 քաշ շաքար, 1 քաշ ջուր), բայց այդ դեպքում յեփելիս շաքարաջի մեջ յուրաքանչյուր կզ շաքարին պետք եւ գցել 1 գր գինեքարի կամ լիմոնի թթու, հակառակ դեպքում շաքարաջուրը կբյուրեղանա: Մեղուները շաքարաջուրը կփերցնեն, կմշակեն, կդասավորեն իրենց բնազդների համեմատ և կսերեկեն: Այս յեղանակով կերակրումը չի կարելի ուշացնել, վորովդետե ուշացնելու դեպքում մեղուները շաքարաջուրը չեն սերեկի և դա ձմեռը խոնավություն կծծի, կթթվի և ընտանիքին կվնասի:

բ. Խոսք չկա, վոր կարելի յեւ հանել նաև բնի շրջա-



Նկ. 3. Գաշարի լրացումը սերեկած շրջանակներով.

սակները, վորոնց մեջ մեղրն անհրաժեշտից քիչ եւ և վորխարենը դնել նորմալ շրջանակներ (բայց վոչ մինչեւ տակը սերեկած շրջանակներ):

Կարելի յեւ և մեղրով շրաշանակները դնել վեթակում յեղած սակավամեղր շրջանակների արանքում. այդ դեպքում պաշարի դասավորությունը հետևյալ ձեր կտանա:

Զմեռոց դնելուց անմիջապես առաջ կարելի յեւ մի շրջանակ սերեկած մեղր պառկեցնել շրջանակների վրա կծծիլի գլխին:

գ. Այդպիսի ուշ կերակրման համար լավ են նաև կերակրաշաղախը, վորի մասին ասացինք. կերակրաշաղախ պատրաստելու համար պետք եւ կտոր շաքար աղալ, թանգիֆով անցկացնել, ապա մի ամանով ծոր մեղր տաքացնել և հետզհետեւ շաքարալյուր ավելացնելով այնքան հաւաք, մինչեւ վոր այլևս շաքարալյուր չլնդունի. ապա ըստ պահանջի 1—2 կիլոյանոց բլիթներ շիներ, փաթաթել թանզիֆի մեջ, ինչպես արդեն տաել ենք և դնել կծծիկի գլխին, ծածկոցի տակ:

դ. Կարելի յեւ նույնպես կծծիկի գլխին դնել խոնավոցրած շաքարի կտորներ, ըստ պահանջի:

ե. Յեթե կտոր շաքար չկա, կարելի յեւ շաքարավագ լիփել, ինչպես մեզնում յեփում են թեյի համար, և ափսեների մեջ կաղապարելով՝ դնել կծծիկի գլխին:

5. Մենք խոսեցինք պաշարի քանակի և գասավորության մասին. մեզ մնում եւ պարզել մի խնդիր ևս. յենթադրենք մենք վորոշել ենք թողնել մեր ընտանիքներին 10-ական շրջանակ պաշար, վորոնցում կա 16—18 կգ մեղր. անհրաժեշտ եւ արդյոք հենց ալդ 10 շրջանակը թողնել վեթակում մինչեւ հետևյալ գարուն և լերը արգորք բնից հանել մյուս 2 շրջանակը, վոր պետք եւ հանձնենք վարչությանը վորպես արտադրանք. չե՞ վոր վիթակում կա 12 շրջանակ:

Այս խնդրում մենք պիտի ղեկավարվենք հետևյալ պկպունքներով. ա) յերեք չպետք եւ նեղել կծծիկը. այն արհեստականորեն չպետք եւ սեղմել Յեթե ձմեռոց դնելու մտմենտին կծծիկը դասավորված եւ 10 շրջանակի վրա, ուրեմն բոլոր ալդ շրջանակները պետք եւ մասն փեթակում. Մեղրաբերքը վերջանալուց առաջ կամ հենց նրա վերջին մենք վերցնում ենք միայն վերնահարկը, իսկ բնի 12 շրջանակին առայժմ բոլորորին ձեռք չենք տալիս,

քանի վոր մեղուն պատում ե այդ բոլոր շրջանակները։
այնուհետև, ի՞րք կծիկը կնվազի և կսեղմի, աջից և ձա-
խից, մենք կհանենք այն շրջանակները, վորոնց վրալից
մեղուն քաշվել ե։

Այսպես ենք վարվում, վորովհետև շրջանակների թի-
վը բռնի կերպով պակասեցնելով մենք զրկում ենք ըն-
տանիքն որինաչափ կերպով հաշերի վրա դասավորվելու
հարավորությունից։ մեծաքանակ մեղուն խոնակում ե
փոքր տարածության վրա, և դրանից ընտանիքն աննոր-
մալ կերպով նվազում ե։

Ուրեմն՝ այս կերպ հեռացնելով հանելու յենթակա
շրջանակները, փեթակում թողնում ենք 10 շրջանակ վոր-
պես պաշար։

Սակայն այս խնդրում մենք պետք ե ղեկավարվենք
նաև մի ուրիշ սկզբունքով. ընտանիքը յուր բնում պետք է
ունենա միան այլիքան հաց, վարքան նա կարող ե նոր-
մալ կերպով պատել. այդ սկզբունքը մենք պետք ե կի-
րառենք անշեղ կերպով և՝ ձմեռող ընտանիքների վերա-
բերմամբ, և՝ գարնան ընթացքում, մինչև դժվարու մեղ-
րաբերքը։ Վորովհետև ձմեռվա և գարնան ընթացքում
(ընտանիքի զարգացման շրջան) ընտանիքի նորմալ կեն-
տագործունեյության հիմնական պայմանը նպաստավոր
ջերմաստիճանն ե և քանի վոր անհրաժեշտ ջերմության
միակ աղբյուրը մեղքի որդանիղմն ե, ուրեմն ընտանիքին
պետք ե տալ այնքան տեղ, վորքան անհրաժեշտ ե նրան
նորմալ կերպով դասավորվելու համար։ Միայն այդ դեպ-
քում նա ի վիճակի կլինի յուր բնի բոլոր մասերում
նպաստավոր ջերմաստիճան պահպանելու։ Ուրեմն, յեթե
ձմեռոց գնալիս փեթակում կա 1,5 կգ մեղու, վորը նոր-
մալ կերպով պատում ե 7—8 շրջանակ, ապա միուս՝ ա-
զատ շրջանակները պետք ե հեռացվեն. յեթե գալնանը

փեթակում կա 1 կգ մեղու, ապա նա նորմալ կերպով
կլպատի մոտ 6 շրջանակ. ուրեմն մյուս շրջանակները պի-
տի հեռացվեն, իսկ նրանց տեղ պիտի դրվի տաքացում
վոչ մի խելացի հիմունք չկա, վորը մեզ թելադրեք
ծ շրջանակ պատող ընտանիքի բնում 10 շրջանակ մեղը
աւնենակ. բացի բնի ցրտեցումից, հատկապես ձմեռվա
համար այդ հանգամանքը մի ուրիշ գդալի մաս ևս կա-
ռաջացներ. այն հացերը, վորոնց վրա մեղուներ չկան,
ձմեռը շատ հեշտությամբ խոնավանում են, նրանցում
մեղը և ծաղկափոշին փչանում ե։

Այս սկզբունքը բոլորսին չի հակասում ընտանիքնե-
րին 10 շրջանակ պաշար թողնելուն. յենթադրենք մենք
100 ընտանիք ունենք, վորոնց թողել ենք 1000 շրջանակ
պաշար։ Հետագայում դրանից 200-ը դուրս ե բերվում
աշնանը և 100-ը՝ գարնանը։ Մենք այդ շրջանակները
պահում ենք կորպուսների, վերնահարկերի կամ հատուկ
պահարանների մեջ՝ չոր և միուրինակ ջերմություն պահ-
պանող մի շենքում (թեկուզ ձմեռոցում) և գարնան ըն-
թացքում գործադրում ըստ պահանջի։

Յերեմն լինում ե բացարիկ գարուն, լերը ընտա-
նիքներն առանց մեծաքանակ պաշարի ել շատ լավ զար-
գանում են՝ դաշտից անհրաժեշտ քանակի նեկտար բերե-
լով։ Յեթե արդպիսի հաջող գարուն լինի, մենք վոչինչ
չենք կորցնի, այլ միայն անսպասելի ուրախություն
կպատճառենք կոլտնտեսության վարչության՝ մեր 300
շրջանակը քամելով և մի 3—4 ցենտներ մեղը հանձնելով
նրան։

6. Պաշարի խնդրի վերաբերյալ մեր ասելիքը լրաց-
նելու համար մենք պետք ե ավելացնենք, վոր ընտանիքի
հաջող ձմեռելու համար անհրաժեշտ ե, վոր մեղրապաշա-
ռը լինի բարձր վորակի։ Լավագույն պաշարը ձմեռվա հա-

մար ծաղկամեղըն եւ Մեր յերկրի անտառային մասներում
(Դիլջան, Շամշագին) մեղուները գտնան յերկրորդ կի-
սին և գլխավոր մեղրաբերքից հետո բավական մանանա-
յն բերում, վորը վորպես ձմեռային պաշտը ուղղակի
վնասակար ե. ուստի, յեթե մեղուները բերքից հետո մա-
նանալի կուտակում են կատարում ձմեռվա համար, մեղ-
քաղական պետք ե միջոցներ ձեռք առնի այդ վտանգը
վերացնելու: Խորհուրդ ե տրվում գլխավոր մեղրաբերքի
ընթացքում ծաղկամեղրով լցված շրջանակներից հանել
պահել և աշնանը նրանցով փոխարինել մանանայով լըց-
ված հացերը. ավելի հեշտ ե այդ վտանգը վերացնել հե-
տեւալ կերպ. յերբ մանանալի կուտակումը կվերջանա-
յուրաքանչյուր ընտանիքին 4—5 կգ շաքար տալ, ինչպես
առել ենք 4-րդ կետում. մեղուները մեր տված շաքարա-
ջուրը կզասավիրեն հացի մանանալով լցված մասի տակ,
կսերեկեն և ձմեռվա ընթացքում կոդտվեն նրանից, վորը
կբավարարի նրանց մինչեւ գարուն, իսկ գարնանը դուրս
դնելուց հետո մանանան չի վնասի մեղուներին, քանի
զար արդ ժամանակ նրանք աղտառեն արտաթորելու հնա-
բավորություն ունեն: Բացի զրանից, գարնանը նրանք
գտշից ել են մեղր բերում, ուրեմն և բացառապես մա-
նանայով չեն կերակրվում, վոր նվազեցնում է մանանալի
վնասակար ազդեցությունը:

Գալասազար աղբայիշեր, և Սաղկամեղների մեջ ևս տարբերություն կա. ձմեռ-
վա համար վորպես մեղուների կեր գերադասվում են բաց
գույն ունեցող և ուշ բյուրեղացող (շաքարակալող) մե-
ղըները։ Մեր յերկրի մեղներն ընդհանուր առմամբ
բարձր վորակ ունեն, բայց նրանցում պատահում են շու-
բյուրեղացող մեղըներ. 1928 թվին Յերևանի Գավիռղբաժ-
նի մեղվանոցը գտնվում եր. Թեղիտարար գլուղում (Ն. Ախ-
ոյակի լրջան), Զեայտած, վոր այդտեղ ստացվեց շատ լավ

վորակի մեղը, բայց մրդեն սեպտեմբեր ամսխն ամտան-ների մեջ այդ մեղը բյուրեղացավ, իսկ հացերի մեջ սե-րեկած մեղը մասամբ բյուրեղացավ արդեն հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում. բայց այդ հանգամանքը չաղղեց մեղուների ձմեռելու վրա: Բամբակի մեղը սերե-կած բջիջներում ձմեռվա ընթացքում նույնպես մասամբ բյուրեղանում ե: Հեղինակի խնամքի տակ 1929 թվից մինչև այժմ մեղուները ձմեռում են այդ մեղի վրա, բայց դրանից վնաս չի ստացվում: Մի բան անվիճելի յէ, վոր մեղուներն այդ մեղը մի մասը (վոր հատիկների յե վերածվում) չեն ոգտագործում և գուրս են թափում, բայց կորուսան այնքան մեծ չե, վոր մենք բամբակի մեղըն ուրիշ մեղրով փոխարինելու գործնական քաղլեր անելինք: Ինչպես կասվի յուր տեղում, վատորակ կերի վնասակար ազդեցությունը նվազում ե, յեթե մեղուները լավ պայմաններում են ձմեռում: Այնուամենայնիվ մենք գտնում ենք, վոր շուտ բյուրեղացող մեղրների ազդեցու-թյունը ձմեռող մեղուների վրա անհրաժեշտ ե լուսաբանել գիտական փորձերով և միայն այդ դեպքում մենք կունե-նանք գիտականորեն հիմնավորված փորձ այդ խնդրի նկատմամբ: Հավանորեն շուտ բյուրեղացող մեղրները մեր յերկրի գաշտակին մասում չեն վասառում մեղուներին, վո-րովիետև ձմեռվա տեվողությունը կարճ ե: Կարող ե զա-տահել, վոր յերկարաւակ ձմեռ ունեցող վայրերում նույն մեղրները վորոշ չափով կազդեն մեղուների վրա:

7. Աշնան ընթացքում բներում տաքացում ունենալը
կտրելիսը չե, վորովհետև փեթակներում փոքր քանակու-
թյամբ վորդ ե խնամփում, կամ բոլորովին չի խնամփում.
Իսկ ինչ չափով այդ խնդիրը վերաբերում ե ձմեռվան,
այդ մասին մենք կխոսենք իր տեղում:

8. Գլխավոր բերքը կերջանութեան մասին ու ուշադիր ու



աշուն մեղվապահը պետք ե միջոցներ ձեռք առնի և աշաւ-
լուրջ կերպով հսկի, վոր մեղվանոցում գողություն չառա-
ջանա: Այդ նպատակով նա պետք ե.

ա) մեղբաբերքի վերջում փոքրացնի յուր փեթակների
արկանացներն այնքան, վորքան անհրաժեշտ ե մեղուների
թռիչքի համար. պետք ե ծեփի-ծածկի փեթակի ճեղքերը,
իբրև այդպիսիները կան և առհասարակ անհնարին դարձնի
գող մեղուների մուտքը փեթակ.

բ) մեղվապահը պետք ե յուր մեղրի և չեչի պահեստն
տյապես սարքի, վոր վոչ մի մեղու մուտք չունենա այս-
տեղ: Բանեցրած շրջանակներ, ծածկոցներ, փեթակներ և
մանավանդ չեչեր չպետք է թողնի դրսում՝ այս ու այն
կողմ թափթփված, այլ այդ ըոլորը պետք ե զետեղի մի
շենքի մեջ, վորտեղ մեղուների մուտքը պետք ե անհնա-
րին դարձնի: Մինչև իսկ մոմի մի չնչին կտորը մեղու-
ներին դրդում ե գողության, ուր մնաց թե մեղրու չեչը.

գ) վոչ մի կաթիլ մեղր և շաքարաջուր չպետք ե կա-
թեցնել մեղվանոցում և մոտերքում. կերակրումը պետք ե
կատարել ուշ յերեկոյան.

դ) փեթակներն առանց անհրաժեշտության չպետք ե
բացել: Վորեւե անհրաժեշտ աշխատանք կատարելիս մեղ-
վապահը պետք ե արագ վերջացնի գործը և փեթակը
ծածկի: Յերբ փեթակից մի շրջանակ ե հանում, անմիջա-
պես պետք ե բունը ծածկի մինչև շրջանակը հետ դնելը:
Առանց ծխի աշխատանք չպետք ե կատարել, առատ ծխի
ովնությամբ միայն մեղվապահը կարող ե քշել այն գո-
ղերին, վորոնք շրջապատռում են փեթակը և աշխատում են
ներս խուժել: Հենց վոր կնկատվի, վոր գրգռմունքը մեղ-
վանոցում ուժեղանում ե, անմիջապես պիտի դադարեց-
նել աշխատանքը, հետաձգելով մինչև մեղուների բոլո-
րովին հանգստանալը:

Պատահում ե, վոր բերքի կատարյալ բացակայություն
ե և մեղուների մեջ գողության զրդիմն այնքան ուժեղ
ե, վոր ուղղակի անհնարին ե փեթակները բացել, մինչդեռ
1—2 փեթակի վերաբերյալ մանրակրկիտ և անհետաձգելի
աշխատանք ունեք. այդ դեպքում փոխադրեցեք փեթակը մի
շենքի մեջ, կատարեցեք ձեր աշխատանքը, ապա տարեք
իր տեղը դրեք, վորից հետո բացեք լուսամուտները, վոր
փեթակից գուրս թռած մեղուները սենյակից վերագու-
նան իրենց տեղը: Հեղինակն այս յեղանակով տամնյակ
փեթակներից մեղր հանելու անընդհատ աշխատանք ե կա-
տարել և վոչ մի գողություն չի առաջացել: Կարելի յէ նաև
վրան պատրաստել մետաղացանցից, վորը դրվում ե փե-
թակի վրա նրա մեջ աշխատանք տանելիս: Հատկապես
նստակյաց Ֆեղվանոցների համար անհրաժեշտ ե ունենալ
ալյալիսի վրան. նրա կմախքը շինվում ե փայտյա ձողե-
րից, վորոնց վրա քաշվում ե մետաղացանց. յեթե վեր-
ջինս դժվարությամբ ե ճարվում, վրանը մասամբ կամ
ամբողջովին պատրաստվում ե ցանցառ քաթանից կամ թան-
զիֆից: Վրանի մի կողմը սարքում ե շարժական և ծառա-
լում ե վորպես դուռ: Վրանի մեծությունը պետք ե լինի
այնքան, վոր նրանում տեղափորի մի փեթակ և մեղվա-
պահը՝ անհրաժեշտ գործիքներով և պարագաներով: Վրանի
վերեւ կարող ե ծածկված չլինել.

ե) գլխավոր բերքի վերջում մեղվապահը պետք ե
վերջ տա անմայր ընտանիքներին՝ վորին մալր տալով,
վորին միացնելով: Անմայր ընտանիքները յենթակա լին
հարձակման: Բայց միայն նրանց վոչնչացմամբ չի վեր-
ջանում հարձակման վնասը: Մեղուները նրանց թալանելիս
այնքան են գրգռվում, վոր սկսում են հարձակվել անգամ
նորմալ ընտանիքների վրա: Ամենափոքրիկ ընտանիքն
ել, յեթե նա մայր ունի և նրա բունն ու արկանոցն

իր ուժին համապատասխան են, ապահովված ե հարձակումից, լեթե միայն մեղուները վորևե պատճառով չեն գաղտղել.

զ) բացի բոլոր այս միջոցները գործադրելուց, մեղվապահը պետք է մշտական աշալուրջ հսկողություն ունենա մեղվանոցի վրա և լեթե իրենից անկախ վորեւ պատճառով գողություն առաջանա, շտագի անմիջապես վերջ տալ գողության, քանի այն գեռ չի ծավալվել և ռեժեղացել, հակառակ դեպքում և՛ մեղվանոցը մեծ վնաս կըրի, և՛ գողությունը դադարեցնելը շտա դժվար կլինի:

թե ինչ միջոցներով մեղվապահը պիտի դադարեցնի գողությունը, լերը նա արդեն սկսվել ե, և ինչպես պետք է ազատի հարձակման յենթարկված ընտանիքը, այդ մասին մենք այստեղ ցուցմունքներ չենք տա, այդ սույն ձեռնարկի խնդրի մեջ չի մտնում, միտև մի անգամ ևս կշշտենք, վոր լեթե նա մեր ցույց տված նախազգուշական միջոցները գործադրի, այլև կարիք չի ունենա գողության դեմ պարտը լու, վորովնետև գողություն չի լինի: Բոլոր դեպքերում, յերբ գողություն ե առաջանում, պետք է մեղադրել մեղվապահին և վոչ մեղուներին:

9. Ինչպես վարվել քույլ ընտանիքների նես.— Մենք արդեն ասացինք, վոր կոլտնտեսային մեղվանոցում թույլ ընտանիքներ չպիտի լինեն. ամենայն վճռականությամբ պետք է վանել անգամ թույլ ընտանիքի գաղափարը: Մեր մեղվանոցների ամբողջովին թույլ լինելը, կամ թույլ ընտանիքների առկայությունը նրանցում միայն մեր անկարողությունն ե ցույց տալիս: Բայց, այնուամենանիվ, մինչև մեր մեղվանոցներն ամբապնդելը մենք թույլ ընտանիքների հետ գործ կունենանք: Ի՞նչ կերպ վարվել նրանց հետ:

Մենք արդեն ասացինք, վոր յեթե ամենաթույլ ընտանիքն անգամ աեղավորված ե իր ծավալին համապատասխան և առհասարակ լավ սարքված ընուռ, և արկանոցը փոքրացված ե, նա կապրի ապահով և գողերի հարձակման չի յենթարկվի:

Յեթե մի մեղվանոցում աշնանը 30—40 թույլ ընտանիք կա, միտք ունի արդյոք նրանք միացնել իրար, դարձնել 10—15 հատ նորմալ ընտանիք: Այդ հարցին առանց տատանվելու և վճռականորեն պետք է բացասական պատասխան տալ. այդ ընտանիքների գոյությունը պետք է պահպանել մինչև գարսւն՝ հատկապես մայրերի համար. լեթե պաշարը քիչ ե, պետք է հարեան փեթակներից լրացնել. վերջապես, ծայրանեղ դեպքում պետք է շաքարով նրանց պաշարն ապահովել: Իսկ լերը նրանք գարուն կհասնեն, նրանց մայրերը կոգաագործվեն, իսկ գարենք կմիացվեն ուրիշ ընտանիքների, կամ նրանք ժամանակին կուժեղացվեն և նորմալ ընտանիքներ կդառնան:

Մեղվապահը պետք է իմանա, վոր յեթե վաղ գարնանը 5—600 գր մեղու կա փեթակում, այդ ընտանիքը մինչև գլխավոր մեղրաբերք լիակատար զարգացման կհասնի և արտադրանք կտա, միայն թե մեղվապահը նրան խնամելու վարպետություն և բարեխղճություն ունենա:

Յեթե աշնանը 5 և պակաս շրջանակ պատող ընտանիքներ ունեք, անհրաժեշտ ե նրանց տեղավորել ամեն գուրգը մի փեթակում. դրա համար պետք է փեթակը ֆաներալի միջնապատով յերկու մասի բաժանել այսպես, վոր վոչ մի մեղու մի բաժանմանից մյուսն անցնել չկարողանա. իսկ դրա համար պետք է փեթակի պատերի և հատակի մեջ շպունդ հանել և միջնապատը հագցնել նրա մեջ այսպես, վոր ասելի ծակ անգամ չմնա. արկանոցը ևս պետք է կիսել:

Այս յեղանակը պետք ե մտցնել մեր մեղվաբուծութիւնն մեջ վորպես ուսցիոնալացման մի լուրջ քայլ։ Դրա առավելությունները հետեւյալներն են.

ա) յերկու փոքր ընտանիք առանձին փեթակներում յերբեք նպաստավոր ջերմաստիճան պահպանել չեն կարող, մինչդեռ մի փեթակի մեջ լինելիս նրանցից ամեն մեկը նույնքան ի վիճակի կլինի այդ ջերմաստիճանը պահպանել, վորքան մի մեծ ընտանիք.

բ) փոխանակ 40 փեթակ վերցնելու, դնելու, ձմեռոց տեղափոխելու, ձմեռոցից հանելու և ալին, մենք գործ կունենանք միայն 20 փեթակի հետ. այսպիսով մեր աշխատանքը և ծախսերը կը կնակի չափով կպակսեն.

գ) տաքացումը կպահնանջի յերկու անգամ ավելի քիչ աշխատանք և տաքացման պարագաներ՝ տոպրակներ, միջնատախտակներ և դարման:

10. Նուկենուսների աշնան խնամք.—Բարեկարգ մեղվանոցը պետք ե պահեստի մայրեր ունենա և այդ ժամկերը պիտի ձմեռեն։ Նրանք, իհարկե, առանձին փոքրիկ ընտանիքներում պիտի լինեն, զորոնց մենք նուկենուս ենք անվտնում։ Վորպեսզի ամեն մի նուկենուս աշնան ընթացքում ապրի և ձմեռն ել անցկացնի, պետք ե բավական մեղու ունենա, պաշարով ապահովված լինի և հարմար բուն ունենա։ Նուկենուսները կարող են լինել նորմալ շրջանակներով և կիսաշրջանակներով։ Յեթե նուկենուսում մեղուն պատում ե յերկու նորմալ շրջանակ կամ չորս կիսաշրջանակ և պաշարով՝ ապահովված ե, շատ լավ կարող ե ձմեռել։ Յեթե մեղուն քիչ ե, յեթե նա հազիվ պատում ե մի միջնաշանակային տարածություն կամ հազիվ՝ 1—2 կիսաշրջանակ, այն ել՝ վոչ լրիվ, նրան պետք ե հաշվել անկենսունակ։ Այդպիսի նուկելեռումներն անպարհան պետք ե միացնել իրար հետ։ Այսպիսով մենք աշնան

ընթացքում կկազմենք և ձմեռելու կդնենք միայն լիարժեք կլեղուսներ։ Նրանք տեղավորված կլինեն համապատասխան գաղութ-փեթակների մեջ և փոխադարձ կերպով իրար կտաքացնեն, անգամ գարնանը հաջողությամբ վորդուձու կինամեն և կզարդանան։

11. Յենթադրենք այս գործողության հետեվանքով մեզ մոտ ավելացավ 10 կամ 20 մայր։ ձմեռն ինչպես պահել նրանց։ Դրա համար մեր նորմալ ընտանիքները փոխադրում ենք կիսած փեթակների մեջ, վորոնց մասին խոսեցինք։ Իին մայրը մեղուների մի մասի հետ մնում է միջնատախի մի կողմում, իսկ մի մասը, առանց մոր՝ մյուս կողմում։ Ահա, նալած աղաս մալրերի թվին, հարկավոր քանակի ընտանիքներն այս կերպ պատրաստելով՝ մենք մալրերը բաժանում ենք, ամեն մեկը տեղափորելով մի ընտանիքի անմայրացրած մասում։ Գարնանը մենք այդ մալրերն ոգտագործում ենք ըստ մեր հայեցողության, կամ, ավելի ճիշտ՝ ըստ մեր պլանի։

Մեղվապահը լուր ըոլոր աշխատանքները պետք ե ավարտած լինի այն ժամանակ, իեր մեղուներն արդեն կծիկ են կապում։ Իսկ մեղուները կծիկ կապելուց հետո պիտի հեռացնի աղատված շրջանակները և դնի տաքացումները, սպասելով մեղուները ներս դնելու ժամկետին։

12. Անհրաժեշտ ե նաև թե հիմնական փեթակներում և թե նուկենուսներում շրջանակների վրա ձողիկներ դնել, վորպեսզի մեղուները շրջանակից-շրջանակ անցնել կարողանան, իեր նրանք կարիք ունեն արդ անելու և յերբ ի վիճակի լին այդ անել։

13. Խորհուրդ կտայինք նույնպես աշնան ընթացքում խուսափել լիմոնազի և քաղցրավենիների գործարանների հարեւանությունից։ Ալդ գործարաններում չեն հօգում լուսամուտները ցանցապատելու մասին, ուստի և նրանք

մեղուների գերեզման են հանդիսանում։ Հաստատորեն կարելի յե պնդել նույնպես, վոր ընտանիքները շատ մեղու յեն կորցնում և զգալի կերպով թուլանում այն տեղերում, փորտեղ մեծ չափերով և յերկար ժամանակ խաղող են ձիլում և դոշաբ յեփում։

Բ. ՀԱՆԳՍՏԻ ԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Մեղի բուն հանգստի շրջանը մեր յերկրի լեռնային գոտում սկսվում ե մոտավորապես հոկտեմբերի սկզբից, մերը գիշերներն արդեն բավական ցուրտ ե և միայն ցերեկները յեղանակը մի քանի ժամով տաք ե լինում։ Այդ ժամանակ միայն հատ ու կենտ մեղուներ են զաշտ թուչում՝ աշնան ուշացած ծաղիկներից ծաղկեցոշի բերելու։ Յերբեմն մեղուները դուրս են թուչում փեթակից «խաղալու», իրենց ստամոքսում հավաքված կղկղանքից մաքրվելու։ Հետզինեւ յեղանակներն ավելի ու ավելի ցրտում են, մեղուն փեթակում «կծիկ ե կապում» (դասավորվում ե խիտ զանգվածով, վորը գնդի ձև ունի), ընկղղմվում ե հանգստի կացության մեջ և այլս փեթակից բոլորովին դուրս չի գալիս։ Այդ վիճակում նա մնում է մինչև զարուն, յերբ ձյունը հալվում ե և սկսվում են տաք որերը։

Հանգստի գրությունը տարբերվում ե գործունյա գրությունից վոչ միայն նրանով, վոր մեղուները պարտպ նստում են փեթակում, այլ մեղի մարմնի մեջ կատարվող կենսական գործողություններն արդ ժամանակ բոլորովին այլ ընթացք են ունենում. ուստի, յեթե մենք ուզում ենք մեղուների ձմեռելու պարմանները հասկանալ և հաջող կերպով կազմակերպել նրանց ձմեռումը, պետք ե պարզ դաշտափառ ունենանք այդ դործողությունների մասին։

Հանգստի կացությունը քուն չե. քունն առաջանում է հոգնածությունից. քնի ընթացքում մեր մարմնում վե-

րականդնվում են այն նկութերը, վորոնք մեր գործունյա դրության ժամանակ ծախսվել են, սպառվել, և վերացվում են այն թունավոր նյութերը, վորոնք այնտեղ գոյացել են։ Քնի ժամանակ կենդանու մարմնի կենսական գործողությունները (մարսողություն, արյան շրջանառություն և այլն) դանդաղում են միայն չնչին չափով։ Մեղուները ևս քնում են։ Ամեն մի մեղվապահ նկատած կլինի ընտանիքի յեռուն աշխատանքի ժամանակ բջիջների մեջ մտած մեղուներ՝ անշարժ վիճակում, վորոնց միայն պոչի ծայրն և դուրս ցցված բջիջ։ Այդ համարվում ե մեղուների քնի վիճակ։

Մեղուների հանգստի կացությունն ըմբռնելու համար մենք պետք ե դիմենք կենսաբանական գիտությունների ոգնության։ Ըստ այդ գիտությունների, գոյություն ունեն մեծ թվով կենդանիներ, որինակ՝ մեզ լավ ծանոթ կենդանիներից շատերը՝ մողենները, գորտերը, ոձերը. գրանցից բացի՝ միջատների ամբողջ դասը և ուրիշները, վորոնց որդանիզմն ընդունակ չե շրջապատող ողի պալմաններից անկախ իրենում պահպանել մի մշտական ջերմաստիճան։ այդ կենդանիների մարմնի ջերմաստիճանը կախված ե շրջապատի ջերմաստիճանից։ Յերբ վերջինս ընկնում ե, ընկնում ե նաև նրանց ջերմաստիճանը։ Նրանք պաղում են, Այդ պատճառով ել նրանց անվանում են պաղարյուն կենդանիներ։ Կաթնասունների, որինակ՝ կովի, ձիու, ինչին նաև մարդու արլան ջերմաստիճանը նույնն ե ամենախիստ ցրտի և շոգի ժամանակ թե ուժգին աշխատանքի և թե հանգստի վիճակում։ Իրենց ուրուխն կառուցվածքի և կատարվող ուրուխն կենսական պրոցեսների շնորհիվ այդ որդանիզմներն ընդունակ են իրենցում մի վորոշ ջերմաստիճան պահպանել։ Մալրահեղ ցրտի կամ տաքի նրանք կարող են չդիմանալ—մեռնել բայց պաղել և ապա վերա-

կենդանանալ չեն կարող. մենք գիտենք, վոր մարդու ջերմաստիճանը տատանվում ե շատ նեղ սահմանում՝ 36 և 37 աստիճանի միջև. միայն հիվանդ մարդու ջերմաստիճանը դրանից ավելի կամ պակաս ե լինում. վերջին գեպքում, յեթե ջերմաստիճանն ընկնում ե մինչև 35, հիվանդը վտանգի յե լենթակա և յեթե չհաջողվի շուտով վերականգնել նորմալ ջերմաստիճանը, նա կմեռնի:

Իսկ պաղարյուն կենդանիները՝ ընդունակ չլինելով մշտական ջերմաստիճան պահպանելու՝ ընդունակ են խիստ ցրտերի ժամանակ պաղել, ամիաներով մնալ այդ վիճակի մեջ և, յերբ ոդի ջերմաստիճանը կրածրանա, տաքանալ և անցնել գործունյա վիճակի. Միջատներն ընդունակ են վորոշ սահմաններում փոփոխել իրենց մարմի ջերմաստիճանը, մկանալին աշխատանքի միջոցով. մի շարք միջամտների վրա ավացուցված ե, վոր թուիչքի վիճակում նրանց ջերմաստիճանը սովորականից բավական բարձր ե լինում. մենք կտեսնենք, վոր մեղուները նույն միջոցով (մկանալին աշխատանքի) կծիկի ջերմաստիճանն ուժեղ կերպով բարձրացնում են. Իսկ, որինակ մարդը, վորքան ել իրեն չարչարի, նրա ջերմաստիճանը չի բարձրանա:

Սակայն շրջապատի ջերմաստիճանի ազդեցությունը պաղարյուն կենդանիների վրա միայն նրանով չի սահմանափակվում, վոր նրանց մարմի ջերմաստիճանն ընկնում ե. միտքամանակ կենդանու որգանիզմում՝ ըջիջների մեջ կարեվոր փոփոխություններ են տեղի ունենում, փոփում ե արյան բաղադրությունը, ու մեծ շափով դանդաղում ե արյան շրջանառությունը, շնչառությունը, մարսողությունը և առհասարակ բոլոր կենսական պրոցեսները. Ամիսների ընթացքում կենդանին վոչ շարժվում ե, վոչ ուտում. Ահա այս դրությունը կոչվում ե ընդարձակություն. Պետք ե հիշատակել նաև, վոր այս կենդանիներն ընդար-

մության մեջ են ընկնում նաև նորմալից ավելի բարձր ջերմաստիճանի ազդեցության տակ, խիստ շոգերի ժամանակ. Սակայն պետք ե ասել, վոր այս յեղանակով ցրտերին և տաքին դիմանալու ընդունակությունն ունի յուր սահմանները. չափից գուրս ցուրտ կամ տաք լինելու դեպքում այդ որգանիզմները մեռնում են:

Ընդարձանալու ընդունակությունը կենդանիների համար մի միջոց ե՝ շրջապատի աննպաստ պայմաններում իրենց գոյությունը պահպանելու և չմեռնելու համար, մինչև պայմանները կրկին նպաստավոր կդառնան. այդ ընդունակությունն որգանիզմները ձեռք են բերել իրենց զարգացման լերկարատե պատմական պրոցեսում պասսիդրեն, հարմարվելով իրենց միջավայրին:

Բայց բոլոր ընդարձանալու ընդունակություն ունեցող կենդանական տեսակների միջավայրը, գոյության պայմանները միևնուն չեն յեղել և նրանց զարգացումը միանման չի ընթացել, դրա համար ել ինչպես առհասարակ, նույնպես և ընդարձանալու խնդրում լուրաքանչյուր կենդանական տեսակ ունի յուր առանձնահատկությունները, ընդարձան մեջ ընկնելու յուր ջերմաստիճանը, ցրտելընդարձության մեջ ընկնելու յուր ջերմաստիճանը, ցրտելընդարձանալու յուր առանձնահատուկ որենքները:

Այժմ տեսնենք, թե ինչ առանձնահատուկ ձեռք, ինչ որինաչափություններով ե արտահայտվում մեղուների կյանքում ընդարձանալու որենքը և լերեվույթը:

Այս տեսանկյունից դիտելով մեղուների ձմեռային հանգստի կացությունը, մենք համոզվում ենք, վոր դա ընդարձակություն ե, բայց զգալի կերպով ձևափոխված:

Տիպիկ ընդարմության վիճակ ապրում ե մեղքին մոտիկ միջատներից, որինակ՝ կրետը՝ վերջինս մի քանի ամսվա ընթացքում կենդանության վոչ մի նշան չի ցույց տալիս և փոչինչ չի ուտում. իսկ մեղուն լիակատար ընդարմության մեջ չի ընկղմվում. նա և ուտում ե, և շարժվում, թեպետ շատ չնշին չափով: Բայց նրա մարմինը պաղում ե (արյան ջերմաստիճանն ընկնում ե) և բոլոր կենսական պրոցեսները նրա որգանիզմում խիստ գանգաղում են. այդ արդեն ընդարմության տիպիկ նշաններ են: Մեզի հանգստի վիճակն ըստ իր կենսաբանական նշանակության ևս շատ մոտ ե ընդարմության, վորի իմաստը, ինչպես ասել ենք, այն ե, վոր կենդանին կարողանում ե կերակրի բացաբանակ բացակայության յերկարատես ժամանակաշրջանում պահպանել իր գոյությունը, չմեռնել, մինչև պալմաններն ավելի նպաստավոր կդառնան: Մեզուն թեպետ պաշար ունի, բայց այդ միջոցով պաշարի ծալրահեղ խնայողություն ե կարողանում անել. դրանից բացի, նա պահպանում ե յուր կենսական ուժերը, ինչպես արդեն ասել ենք: Մեզուների հանգստի կացությունը մենք պետք ե անվանենք կիսաընդարմացած կացությունն:

1. Ընկնում ե անհատ մեղքի մարմի ջերմաստիճանը:
Շատ դժվար ե այդպիսի մեկ փոքրիկ մարմի ջերմաստի-
ճանը չափել. ուստի և մինչև այժմ ել գեռևս մեղքա-
ծանը չափել. ուստի և մինչև այդ մասին տարբեր կար-
բուծական գրականության մեջ այդ մասին տարբեր կար-
ծիքներ գորություն ունեն, վորովինետև մեղքի մարմի
ջերմաստիճանը չափելու փորձերը տարբեր հետևանքներ
են տալիս Բայց մեզ շատ լավ հայտնի լե, վոր ձմեռող
կծիկի մեջ ջերմաստիճանը տատանվում ե + 13,9-ի և
20,5-ի սահմաններում (Ֆիլիպս, Դիմիտրոս), մինչդեռ ամառը

կծիկի մեջ ջերմաստիճանը մոտ + 35 ե (աշխատությանս մեջ ջերմաստիճանը ցույց ե տրվում ըստ ջելսիտսի): Իհարկե, չի կարող պատահել, վոր մեղիկի մարմնի մեջ ջերմաստիճանն այս լեռնու դեպքում ել նույնը լինի: Մեր անձնական փորձերը մեզ բերել են այն լեզվակացության, վոր մինչև իսկ ամառվա ընթացքում, ըջապատողոգի ջերմաստիճանի ազդեցության տակ (լեռը մեղուներին աեղավորում ենք զով շենքի մեջ) կծիկի ջերմաստիճաննը ընկնում եւ նույնը դիտել ե նույնպես Դալմատովը (Опытн. пас., 1929, октябрь). Նրա փորձերում + 12-14° ջերմաստիճանի տակ ձագակալի մեջ ամփոփված կծիկի ջերմաստիճանը + 33-ից ընկել ե մինչև + 17,6:

Մըս կողմից՝ մեզ հայտնի լե, վոր միջատները պարբռն կենդանիներ են և նրանց մարմնի ջերմաստիճանը ցուրտ լինելիս ընկնում են իհարկե, մեղուն ընդհանուր որենքից բացառություն չի կարող կազմել:

2. Մեղքի մարմնի մեջ կենսական պրոցեսումը առ սողությունը, արյան շրջանառությունը, շնչառությունը և այլն խիստ դանդաղում են. դանդաղում եւ և նյութերի փոխանակությունը:

Դրա հետեւանքով մեղուն կարիք չի գտում սպառու
սովորական կարգով. ձիւտ ե, նա ալդ դրության մեջ
շարունակում է ուտել, բայց չափազանց քիչ. Ըստ Բեր-
լեպի՝ մեղվի ընտանիքը հանգստի կացության մեջ ուտում
է որական $1\frac{1}{3}$ լոտ, վոր հավասար է մոտ 16 գրամի. Կե-
թե ընտանիքում հաշվենք 1,6 կգ մեղու, այսինքն՝ մոտ 16,000
ուտող, ուրեմն 1,000 մեղուն որական ուտում է մեկ գրամ,
այսինքն՝ մեկ մեղուն 4 ամսվա ընթացքում (120 որ)
ուտում է մտու $\frac{1}{8}$ գրամ մեղք։ Ըստ մեղվաբուծության
համառոտ հանրագիտակի՝ Կծիկը 4 ամսվա ընթացքում
(սովեմբեր—փետրվար) ուտում է 9 ֆունտ մեղք (Վ. Ի.
Ժյոկовսկայա):

Ուրեմն իրավամբ կարող ենք ասել, վոր մեղուն հանգստի կացության մեջ համարյա չի ուտում։ Յեկ այդ վոչ թե նրա համար, վոր նա «չի ուտում ուտել», վոր նա գիտակցաբար խնայողաւթյուն ե անում, ալլ նրա համար, վոր նրա մարմնում դանդաղել են կենսական պրոցեսները։ Դրանից ավելին ուտելու նա կարիք չունի և չի կարող ուտել։

3. Չմեռալին հանգստի կացության մեջ մեղուն թեպետ և շարժումներ ու վորոշ աշխատանք կատարում ե, բայց շատ չնշին չափով։ Նրա ամբողջ աշխատանքն այն ե, վոր նա ուտում ե։ Կծիկն ուտելով իրեն մոտիկ գտնվող մեղը, շարժվում ե դեպի վեր, իսկ լեթե կծիկի վերևում մեղը չկա՝ դեպի լետ։ Բայց վորովիետե ամբողջ ձմեռվա ընթացքում նա ուտում ե ընդամենը 6—9 ֆունտ, ուրեմն յուրաքանչյուր շրջանակից 400—600 գրամ, նշանակում ե՝ 4 ամսվա ընթացքում նրա կատարած ամբողջ ճանապարհորդությունը հավասար ե ընդամենը մոտ 25 միլիմետրի։ Իրավամբ կարող ենք ասել, վոր մեղուն ձմեռվա ընթացքում համարյա չի շարժվում և չի աշխատում։

Շնորհիվ այս հանգամանքների, մեղուն հանգստի կացության մեջ իր կենսական ուժերը չի ծախսում, չի սպառում, այլ համարյա լիակատար կերպով պահպանում է մինչև զարուն։ Մենք գիտենք, վոր աշխատավոր մեղվի կյանքի տեղությունը գործունյա վիճակում մոտավորապես 6—8 շաբաթ ե, իսկ ոգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում դուրս յեկած մեղուներն ապրում են մինչև հետեւվալ զարուն (մոտ 8 ամիս) և վաղ գարնան դաժան պայմաններում կատարում են ամենածանր աշխատանքը, մինչև վոր նոր դուրս յեկած մեղուները նրանց հետզհետե կփոխարինեն։ Դրա պատճառն այն ե, վոր ամառալին յեռուն աշխատանքի ժամանակ մեղուն արագ կերպով սպառում ե իր կենսական ուժերը, մաշտամ ե իր մարմինը,

շուտով զառամում ե ու մեռնում (իհարկե մեղուների խռշոր տոկոսը զո՞ն ե գնում նաև զանազան պատահարների), իսկ բերքից հետո առաջացած մեղուներն ընկրղմանում են հանգստի կացության մեջ և չեն ծախսում իրենց կենսական ուժերը, վորի չնորհիվ աշնանը կծիկի մեջ մտած և կիսաշնդարմացած կացության մեջ ընկզմված մեղուն պահպանում ե իր եներգիան և կենսունակությունը մինչև գարուն, կարծես այդ 4 կամ 5 ամիսը նա ապրած չենին։

Ուրեմն, շնորհիվ հանգստի կացության, խնախվում ե։
ա. պաշարը.

բ. մեղվի կենսական ուժը։

Դրանից պարզ պետք ելինի, թե վորքան կարևոր ե հանգստի կացության նշանակությունը մեղ համար։ Պարզ պետք ելինի նույնպես, վոր ինչքան ավելի յերկարացեավ լինի այդ կացությունը յեն լիակատար, այնքան ավելի խոռոր կիֆնի պաշարի յեվ կենսական ուժերի խնայալությունը։

Կոնկրետացնենք մեր ասածը։ 1934—35 թթ. ձմեռն Արաբատյան դաշտում շատ նպաստավոր յեղավ մեղուների համար և նրանք ընդհանուր առմանք շատ լավ վիճակի մեջ դուրս գրվեցին մարտի սկզբներին։ Բայց ամբողջ մարտ ամսի ընթացքում ձյունախառն անձրևներ և ցրտեր յեղան։ Վորի հետևանքով ընտանիքներն այդ ժամանակամիջոցում ահազին կորուստ տվին ու թուլացան։ Յեթե հնարավոր լիներ մեղուներին պահել ձմեռոցներում կատարյալ հանգստի վիճակում մինչև մարտի վերջը, այդ կորուստը տեղի չեր ունենա։ Դաշտային գոտում հոկտեմբերի կեսերից բերքն խսպառ դադարում ե և վորդուձուի խնամատարությունը վերանում. բայց մեղուները դեռ մինչև դեկտեմբերի 10—15-ը դրսում են։ յեթե հնարավոր լիներ հոկտեմբերի 20—30-ին մեղուները ձմեռոց դնել, դրանից մենք խոշոր շահ կունենայինք։

Գ. ԶԱՆԱԶԱՆ ՀԱՆԴԱՄԱՆՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆԴԱՏԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Այժմ տեսնենք, թե ինչ հանգամանքներ ինչ կերպ են ազդում հանգստի կացության վրա և ինչ գործնական հետեւանքներ են ունենում մեզ համար:

Զերմասինան.— Ինչպես գիտենք, մեղուն հանգստի կացության մեջ ե ընկղմվում շրջապատի ջերմաստիճանի ազդեցության տակ. գիտենք նաև, վոր հանգստի կացության մեջ գտնվող կծիկի ներսում ջերմաստիճանը տառանվում է + 13,9-ից 20,5°-ի սահմաններում: Վորքան պիտի լինի սակայն շրջապատի ջերմաստիճանը, վորպեսզի կծիկի ջերմաստիճանը պահպանվի այդ սահմաններում: Առայժմ դեռևս մեղվաբուծական գիտությունն այդ հարցին սպառող պատասխան չի տալիս. հավանորեն, շրջապատող օդի ջերմաստիճանը պետք է + 13,9-ից մի փոքր ցածր լինի, վորպեսզի կծիկի ներսում մեր ասած դրությունն ստեղծվի: Ցերկի + 11-ից 12°-ը դրա համար ամենահամապատասխանն է: Բայց այդ միայն այն դեպքում, յեթե կծիկը փեթակի մեջ ամփոփված չլիներ, և նրա ներսում առաջացած տաքությունն աղատորեն արտահոսեր: Իսկ քանի վոր մեղուն ամփոփված է փեթակի մեջ, նրա շրջապատում (փեթակի ներսում). ոդն ավելի տաք է, քան դրսում. ուստի և մեղուն չի կարողանում ընկղմվել կիսաընդարմացած վիճակի մեջ: 1926 թվին կատարած մեր գիտողությունները մեզ բերին այդ վերջնական յեզրակացության, վորը հաստատվում է նաև վերեկում բերած՝ Դալմատովի դիտողություններով: Այդ հաստատվում ե նաև մեղվաբուծական գրականության այլ տվյալներով (Ռուտ):

Դրանից մենք կարող ենք լեզրակացնել, վոր լեթե մեղվի կծիկն ազատորեն կախված լիներ ոդի մեջ (առանց

փեթակի), այն ժամանակ 11—12°-ը կարող եր նպաստավոր լինել. բայց փեթակի մեջ ամփոփված ընտանիքի համար այդ ջերմաստիճանը բարձր ե. դորձնական գիտողությունները ցուցեց են տվել, վոր այդ դեպքում լավագույն ջերմաստիճանը + 6-ից 8-ն ե*):

Այստեղ վորոշ դեր ե խաղում նաև կծիկի չափը. մեծ կծիկի համար նպաստավոր ե շրջապատի համեմատաբար ավելի ցածր ջերմաստիճանը, իսկ վորը կծիկի համար՝ ավելի բարձրը. որինակ՝ +8°-ի պայմանում ուժեղ ընտանիքը (մեծ կծիկը) կարող է չընկղմվել լիակատար հանգըստի կացության մեջ, իսկ վորը կծիկը՝ կարող է:

Ցերը շրջապատող ոդի ջերմաստիճանն ավելի բարձր է, քան անհրաժեշտ և, մեղվի մարմնի ջերմաստիճանը չի կարող ընկնել և նա հանգստի կացության մեջ չի կարող ընկղմվել: Նրա մարմնում կենսական պրոցեսները չեն դանդաղի, այլ կկատարվեն սովորական կարգով: Մեղուն մնադի ավելի մեծ կարիք կզգա, նրա մարմնում նյութերի ուժեղ փոխանակությունն տեղի կունենա և մեծ չափով եներգիա կարտադրվի: Այդ պատճառով մեղուն գործունեյության պահանջ կզգա. նա փեթակում կսկսի նեղվել, աղմկել և փորձ կանի դուրս թռչելու: Փեթակի ներսում նա կսկսի վորդ խնամել: Շատ ուժելու պատճառով նրա որգանիզմում կառաջանա մեծ քանակությամբ կղկղոնք և նա արտաթորելու պահանջ կզգա: Ի վերջո, նա ստամոքսի խանգարում կատանա և կարտաթորի փեթակում, յեթե փեթակի անցքը փակված է: Իսկ փեթակից դուրս գալու դեպքում նա կոչնչանա ձմեռոցում: Զերմաստիճանը բարձր լինելով ոդն ավելի չոր կլինի, քան անհրաժեշտ

*) Հստ Ռուտի՝ այդ բարեխառնության մեջ կծիկի ջերմաստիճանը փեթակում + 14 ե, իսկ փեթակի հատակին՝ + 11:

և գատ կանդրադառնա մեղուների դրության վրա, ինչ-
պես այդ կբացասրպի յուր տեղում:

Այդ կերպ առատորեն կծախսվի պաշարը և գարնան
վորդուձվի ինամքի համար չի բավականանա: Մեղուներն
անընդհատ գործունյա դրության մեջ լինելով կվատնեն իրենց
կենսական ուժերը և մեծ թվով կսատկեն ձմեռվա ընթաց-
քում. մնացողները գարնան սկզբին զառամած, հյուծված
և անտոռզջ կլինեն (սաամոքսի խանգարում): Նրանք չեն
դիմանա վաղ գարնան ծանր աշխատանքին և աննպաստ
պայմաններին (քամի, ցուրտ) և շուտով կկոտորվեն: Ըն-
տանիքը կթուլանա և ի վիճակի չի լինի աշխատավորների
թիվը բազմացնելու, վոր, ինչպես գիտենք, առաջին պայ-
մանն և բերքի ընթացքում շատ մեղք հավաքելու համար:
Այսպիսով մեղվազահը կզրկի իր արդյունքից:

Անհրաժեշտ է այստեղ ասել, վոր շոգից նեղվում և
միայն ձմեռոցում գտնվող մեղուն: Դրսում ձմեռող մե-
ղուները տաք լեղանակներին հնարավորություն ունեն փե-
թակից դուրս գայու, արտաթորելու և ալլ:

Յուրաը ևս մեղուների վրա բացասական ազդեցու-
թյուն և ունենում: Մենք գիտենք, վոր մեղվի կծիկը դի-
մանում և խիստ ցրտերին անգամ: Ժայռերի ծերպերում
և ծառերի փշակներում մեղուները ձմեռում են, մինչդո-
ցրտերը յերբեմն հասնում են — 25°-ի և ավելի, բայց այդ
երանց վրա շանգ ե նստում:

Յերբ շրջապատող ոգի ջերմաստիճանն ավելի ցածր
և քան հարկավոր ե, մեղուն ցուրտ և զգում, նա հան-
գըստի կացությունից դուրս և գալիս և գործ և զնում
միշտ միջոցներ չմրսելու, ցրտից չտանջվելու և չմեռ-
նելու համար (մկանային աշխատանք, ինչպես ասված և
առաջաց): Ահա այդ միջոցները (Լանգստրոտ, պчելա
և յլեյ).

1. մեղուն սկսում ե շարժումներ գործել, վոր, ինչ-
պես գիտենք, տաքանալու մի միջոց ե: Ամեն մի մեղու
սկսում ե իր մարմինն արագորեն տատանել.

2. մեղուն սկսում ե մեծ քանակությամբ մեղք ու-
տել. վրա հետեւանքով նրա մարմնում ըոլոր կենսական
գործողություններն սկսում են կատարվել ավելի ուժ-
գին կերպով: Բարձրանում ե մեղվի մարմնի ջերմաստի-
ճանը. ուրեմն մեղուն ուտելով տաքանում ե.

3. կծիկի վերեկի մասում գանվող մեղուներն անընդ-
հատ թևահարում են, ուղղելով վերևում գանվող տաք ողբ
դեպի ընի ներքեկի ցուրտ մասը, վորտեղ գտնվող մեղու-
ներն ավելի յեն մրսում.

4. կծիկի ներսում գտնվող մեղուներն անընդհատ
շարժվում են զեպի կծիկի մտկերեսութը՝ փոխարինելու
մրսող մեղուներին, իսկ վերջիններս անցնում են կծիկի
ներսը, իրենց սառած մարմինները տաքացնելու:

Ծնորհիվ այդ գործողությունների մեղուներին հաջող-
վում է կծիկի ներսում ջերմաստիճանը բարձրացնել մինչև
+ 33—35-ի: Մեղուն անընդհատ գտնվում ե գործունյա
և գրգռված դրության մեջ. կծիկը լայնանում ե: Մեղուն
արթուն ե և գաղաղած. նրա ստորոտ լավում ե մի քանի
քայլ հեռավորության վրա:

Այս դրությունը մեղուների համար չափազանց ան-
սպասա ե, վորն ունենում ե հետեւալ հետեւանքները.

1. մեղուները մեծ քանակությամբ մեղք են ուռառմ
և սպառում իրենց պաշարը.

2. մեղուների հետին աղիքը լցվում ե կղկղանքով,
վորի հետեւանքների մասին արդեն գիտենք.

3. մեղուն սպառում ե իր կենսական ուժերը, զա-
ռամում, հյուծվում. նրա առողջությունը խանգարվում է
(սաամոքսը):

4. շատ ընտանիքներ չեն դիմանում ցրտերին և սպառելով իրենց պաշարն ունի վերջնականապես հյուծվելով՝ ամբողջովին փոխչանում են հենց ձմեռվա ընթացքում։ Միայն ամենաուժեղ ընտանիքները, վորոնք միևնույն ժամանակ հարուստ են պաշարով, մի կերպ իրենց գոյությունը պահպանում են մինչև գարուն։

5. այս ընտանիքները, վորոնք չեն հանդչում, մեծ թվով մեղսու լին կորցնում և թուլանում են։

Միանգամայն հասկանալի լի, վոր ջերմաստիճանի անընդհատ և սուր տատանումները մեղքի համար միանգամայն կորստաբեր են։

Որափիխություն. — Չնայած վոր մեղուն հանգստի կացության մեջ գտնվելիս ավելի դանդաղ ե շնչում և նրան ավելի քիչ ող ե հարկավոր, քան գործունյա դրության մեջ, բայց ողափոխության խնդիրը շատ մեծ կարելի է, բայց ողափոխության ունի հաջող ձմեռելու համար։ Գործունյա վիզորությունը ունի հաջող ձմեռելու համար։ Գործունյա վիզորը մեջ գտնվող մեղուն կարող ե թևահարման միջոցով ուժեղացնել փեթակի ողափոխությունը։ Յերբ փեթակի անցքը նեղ ե և թարմ ողի հոսանքն անբավարար, մեղուները թևահարության միջոցով ուժեղացնում են թարմ ողի հոսանքը դեպի փեթակի փեթակի ներսը։ Նրանք նույն միջոցին են դիմում, յերբ փեթակում շոգ ե և պետք ե այն հովացնել։ Դիմավոր բերքի ժամանակ, յերբ մեծ քանակությամբ ջրալի մեղք ե բերվում փեթակ և փեթակի ողը խտացած ե գոլորշիներով, և յերբ մեղքի մեջ պարունակվող ավելարդ ջուրը պետք ե հեռացնել գոլորշիացման միջոցով, մեղուներն ուժեղ թևահարման են դիմում, վորի հետևանակությամբ ջուրը մոտ 1 կգ և ավելի ջուր ե գոլորշիանում։ Քով մի գիշերվա մեջ մոտ 1 կգ և ավելի ջուր ե գոլորշիանում։ Զեռութիւն պայմաններում մեղուներն արդ յերեք դեպից և վոչ մեկում չեն կարող թևահարելով ողափոխություն առաջացնել ուստի, յեթե նըսանք այդ անսակետից նպաստ-

վոր պայմաններին մեջ չեն դրված, կարող են խիստ տուժել։ Ամենից առաջ դրսից պետք ե թարմ ողի անընդհատ հոսանք լինի դեպի փեթակի ներսը՝ մեղուների շնչառության համար։ Իհարկե, դրա համար մեծ քանակությամբ ող հարկավոր չե։ Յերկրորդ՝ անհրաժեշտ ե, վոր փեթակի ներսում ողը հովանա, յեթե ջերմաստիճանը բարձր ե։ Դրա համար պետք ե դրսից մեծ քանակությամբ ող ներհոսի փեթակ (անցքը պետք ե լայն լինի), իսկ փեթակից տաք ողը պետք ե արտահասի անընդհատ։ Վորովհետև տաք ողը վերև ե բարձրանում, ուժեմն նա պետք ե անցք ունենա փեթակի առաստաղից։ Բայց վրա համար չի կարելի հատուկ ողանցք բացել, վորպեսզի միջանցիկ հոսանք չառաջանա և բունը չցըտի։ Ուշեմն փեթակը պետք ե ծածկված լինի տաքություն պահպանող և ծակոտկեն նյութերով, վորոնք ողը բաց են թողնում, իսկ տաքությունը պահում են։ Վերջապես, ողափոխությունն անհրաժեշտ ե, վորպեսզի փեթակում չառաջանա մեծ քանակությամբ գորշի, նետեապես՝ նաև խոնավություն։

Խօնափությունը կարող ե նույնպես մեղուների վրա խիստ բացասական ազդեցություն ունենալ։ Խոնափությունը կարող ե փեթակում առաջանալ մեղուների շնչառությունից։ Յեթե փեթակը ծածկված ե անթափանց նյութերով և խոնավ ողն առաստաղով արտահասել չի կարող, նրանում խոնավություն կառաջանա։ Յեթե ջերմաստիճանը նորմալ ե՝ +6-ից +8, մեղուների շնչառությունը դանդաղ ե և նրանց արտաշնչած գոլորշիների քանակը քիչ, փեթակի ողն իր մեջ կարողանում ե պահել վորոշքանակությամբ գոլորշի։ Չորրինիվ ողի մեջ գոլորշու նորմալ պարունակության, բաց բջիջներում մեղը պահպանում ե վորոշ աստիճանի թանձրություն, վորը մեղուների համար նպաստավոր ե։ Յերբ փեթակի ծածկն անթափանց ե, կարող ե

փեթակում գոլորշու ավելցուկ տռաջանալ, բայց խոնա-
վությունն սպառնական չափերի չի հասնի: Յերբ ջերմաստի-
ճանը կընկնի (փեթակի ողը կսառչի), ոյլես ողն իր մեջ
չի կարող լուծված պահել գոլորշու սովորական քանա-
կությունը. գոլորշին խտանալով՝ կնստի փեթակի պատերին,
հատակին և հացերի վրա. բաց բջիջներում մեղրը կսկսի
ջուր ծծել. նա ջրալի կդառնա և կսկսի թթվել: Մեղրի
ծավալը բջիջներում կմեծանա և մեղրը կսկսի ծորալ հա-
տակի վրա: Կնքած բջիջներում ել կափարիչների ան-
նան ծակոտիներից մեղրը կսկսի ջուր ծծել և դուրս գալ
փոքր կաթիլներով: Հացերը և մանավանդ ծաղկափոշին
կըորբունեն: Պատն ու հատակը ևս բորբոսով կծածկվեն:
Փեթակից ջուրը դուրս կհոսի: Փեթակի ողը կապականվի:
Վատ կերակրից (թթված մեղր) և ծանր ողից մեղուների-
առողջությունը կվտանգվի, մեղուները կսկսեն սատկել
և նրանց դիակները փեթակի հատակին կնեխեն ու կըոր-
բունեն: Այս վիճակի մեջ գտնվող ընտանիքները կարող
են բոլորովին հանգչել. յեթե չինանցեն ել, շատ մեղու
կկորցնեն և կթուլանան. մեղուները գարնան սկզբին կեն-
սունակ չեն լինի, շատերի մալրերը կսատկեն: Մեղուն
փորլուծ կստանա:

Զրի խնդիրը.— Մեղվաբուծական գրականության
մեջ մենք այս խնդրի մասին հակասական կարծիք ենք
լսում. վոմանը (Դադան) կարծում են, վոր մեղուներին
ձմեռվա ընթացքում ջուր անհրաժեշտ ե, և վոր նրանք
ոգովում են Ջրի այն մանր կաթիլներից, վոր գոյանում
են փեթակներում՝ գոլորշիներից: Վոմանք խորհուրդ են
տալիս փեթակն անթափանցելի նյութերով ծածկել, վոր-
պես զի պատ ու առաստաղի վրա ջուր նստի և մեղու-
ներն ոգտվեն նրանից. վոմանք խորհուրդ են տալիս մին-
չև իսկ մեղուներին փեթակում ջուր տալ. ուրիշները գըտ-

նում են, վոր վորքան փեթակը չոր լինի, այնքան լավ:
Այդ չի նշանակում, թե ոդն ել պետք ե չոր լինի. նա
պետք ե վորոշ աստիճանի խոնավություն պարունակի
յուր մեջ: Մենք մեր անձնական դիտողությունների և
փորձերի վրա հիմնվելով և մեղվաբուծական գրակա-
նության հակասական տվյալները վերլուծելով՝ միանում
ենք վերջին կարծիքին: Լավագույն կերպով ձմեռում են
այն ընտանիքները, վորոնց փեթակներում զատերի և հա-
ցերի վրա վոչ մի կաթիլ ջուր չի գոյանում մինչեւ նրանց
դուրս դնելը: Նպաստել փեթակում ջրի կաթիլներ առա-
ջանալուն, կնշանակե արհեստականորեն մեղուներին տ-
ղետալի դրության մեջ դնել:

Բայց մեղուները վորտեղից են ջուր վերցնում, վորն
անհրաժեշտ ե թե իրենց համար և թե վորդի համար,
վոր նրանք խնամում են դեռ փեթակից դուրս չթուած՝
ձմեռվա վերջում: Յերբ ջերմաստիճանը նորմալ ե (6—8),
փեթակի ողը, ինչպես տեսանք, վորոշ քանակությամբ գո-
լորշի լէ պարունակում իր մեջ, նա գոլորշիներով հագե-
ցած ե. բաց բջիջներում գտնվող մեղրն ողից վերցնում
ե խոնավություն և ըստ իր թանձրության միանգամայն
բավարար դառնում մեղուների գործածության համար:
Մենք հաճախ առիթ ենք ունեցել դիտելու, վոր, մեղրից
բացի, Զրի վոչ մի աղբյուր չունեցող մեղուները հաջողու-
թյամբ ոգտագործում են կերակրաշաղախը և կտոր շա-
քարը, վորոնցից, մանավանդ վերջինը, լուծելու համար,
ջուր անհրաժեշտ ե. յենթադրում ենք, վոր թե այս նը-
պատակի համար և թե վորդերի համար կերակուր պատ-
րաստելիս մեղուներն ոգտվում են իրենց թքից, վորը բա-
վարարում ե ձմեռային սահմանափակ պահանջը, ուստի և
մեղուները վոչ իրենց և վոչ ել վորդի համար ուրիշ աղ-
բյուրից ջուր ձեռք բերելու կարիք չեն զգում: Թե ինչ բա-

շասական աղդեցություն և ունենում մեղուների վրա շըր-
ջապատող ողի բարձր ջերմաստիճանը, մենք արդեն տե-
սանք, բայց զրա վնասակար աղդեցություններից մեկն ել
այն ե, վոր յերբ շըջապատող ողը չափից ավելի տաք ե,
այն ժամանակ նա ընդունակ ե դառնում իր մեջ ավելի
մեծ քանակությամբ գոլորշի պահելու լուծված զրության
մեջ։ Դա ֆիզիկայի ասրարական որենքներից մեկն ե. ու-
շեմն, իերբ ողը, որինակ՝ ունի 6—8° և նրա խոնավու-
թյան աստիճանը նորմալ ե, մեղքն ողից ե խոնավու-
թյուն ստանում, իսկ յերբ ողի ջերմաստիճանը բարձրա-
նում ե 12—13°-ի, ողն սկսում ե մեղքից գոլորշի
խլել։ Շնորհիվ զրա, մեղքը թանձրանում ե և անհարմար
դառնում մեղքի համար. մեղուն ծարավում ե և անհրաժեշ-
տություն զգում ջուր ձարելու, և վորովհետև փեթակում
նա արդ ջուրը ձարել չի կարողանում, ուստի և նեղվում ե,
առնջում և վնասվում։ Միջատաբանությունից մենք գի-
տենք, վոր խոնավության աստիճանն անմիջականորեն ևս
աղդում ե միջատի որգանիզմի վրա։

Յերբ ողի ջերմաստիճանն ընկնում ե (ողը պաղում ե),
նա իր մեջ յեղած գոլորշըն լուծված դրության մեջ
պահել չի կարողանում, և գոլորշն մանր կաթիլներ
գոյացնելով, նստամ ե փեթակում, վորից խոնավություն
ե առաջանում։ Ուրեմն թե փեթակում խոնավություն
չտուածանալու և թե մեղուների չծարավելու համար առա-
ջին և ամենակարենոր պալմանը նորմալ ջերմաստիճանն ե։
Խոնավությանից ազատ լինելու յերկրորդ պայմանն ե
գոլորշու արտահոսումը փեթակից։ զրա համար անհրաժեշտ
ել փեթակը ծածկել այսպիսի ծակոտկեն նյութերով, վորոնք
ուղաց թողնեն. իհարկե, ողի հետ գոլորշն ել դուրս
կդնա։

Լույսի ազգեցուրյունը և ձմեռող մեղուների վրա

բացասական ե. յեթե ջերմաստիճանը նորմալ ե և մեղուն
ընկղմված ե կիսաընդարձացած վիճակի մեջ, լուսն զգա-
մի կերպով չի գրգռում մեղուներին. բայց յեթե ջեր-
մաստիճանը բարձր ե և մեղուները դանվում են գործու-
նյա և գրգռված վիճակում, լույսը նրանց դրդում ե թոփչք
գործել և նրանք ցրիվ են գալիս, փշանում ձմեռուցում, կամ յե-
թե գուրան են ձմեռում, թափվում են ձրունի վրա—կոտոր-
վում. իսկ յեթե մեղուները բացարձակ մթության մեջ են
դանվում, փեթակում շոգլինելու դեպքում անդամ թոփչքի
փորձ չեն անում։

* *

Մեղվապահի ամենամեծ հոգսը պետք ե լինի դեռ
զիսավոր ըերթի վերջերին իր մեղուներն ապահովել լա-
վագույն վարակի պաշարի անհրաժեշտ քանակով, վորի
դասավորությունը ևս պիտի համապատասխանի մեղքի
պահանջներին։

Պահարի վորակը մեղուների հաջող ձմեռելու ամե-
նակարենը պայմաններից մեկն ե։

Հանգստի շըջանը, ինչպես գիտենք, տեսում ե 6 ամիս,
վորից միայն 1—2 ամսվա ընթացքում մեղուները յեր-
բեմն դուրս թաշելու և իրենց ստամոքսում հավաքված
կղկղանքից ազատվելու հնարավորություն ունեն։ Մեր
յերկրի լեռնային մասում 5 ամիս (նոյեմբերի 15-ից ազդիլի
15-ը) նախալեռնային մասում 4 ամիս (դեկտեմբեր-մարտ),
իսկ գաշտավին մասում 3 ամիս (դեկտեմբերի 15-ից մար-
տի 15-ը) նրանք փեթակից բոլորովին դուրս չեն թոշում.
այդ ժամանակամիջոցում նրանք չեն արտաթորում։ 3—5
ամիս մեղուների համար հնարավոր ե առանց արտաթո-
րելու նստել փեթակում միայն յերկու պայմանով. նաև՝
յեթե նրանց ընդունած կերը բարձր վորակ ունի, այսինքն՝
իր մեջ պարունակում ե չնչին քանակությամբ անմար-
ութիւն նյութեր և յերկրորդ, յերբ նրանք չնչին քանակու-

թյամբ կեր են ընդունում։ Բայց մինչև իսկ այդ նպաստավոր պայմաններում ձմեռելիս ել մեղվի հաստ աղիքը լցվում է կղկղանքով, վորից նա ազատվում է գարնան առաջին տար որերը փեթակից դուրս թռչելով։ Յեթե ձմեռվա կերակրի վորակը լավ չե, այսինքն՝ յեթե կերն իր մեջ պարունակում ե անմարսելի նլութերի մեծ տոկոս, այն ժամանակ մեղվի հետին աղիքը շուտով լցվում է կղկղանքով, նրա մարսողությունը խանդարվում է, առողջությունը քայրայվում, և նա արտաթորում է փեթակում ու ապականում հացերը։ մեծ թվով մեղուներ կոտորվում են փեթակում, կենդանի մնացածներն ել թուլանում են ու հյուծվում։ Բայցի այդ, նրանց մեծ մասը գարնան հենց առաջին որերը կոտորվում ե և ընտանիքը խիստ թուլանում։ Մեղրացողը կամ մանանան այդ վատորակ կերերի շարքին են պատկանում։ Այսքանը բավական ենք համարում այդ խնդրի առթիվ մեր առաջուց առածը լրացնելու համար։

Չմեռային հանգիս կացության մեջ գՏնվող մեղուներին ամեն կերպ պետք է պատճանել վորեվի անհանգրացությունից։ Ամեն մի ցնցում, ամեն մի թխկոց նրանց հանգստի կացությունից հանում ե, գրգուռմ։ մեղուներն անմիջապես գործունյա դրության են անցնում, կծիկի ջերմաստիճանն արագորեն բարձրանում ե մինչև $33-35^{\circ}$ ։ Ամեն մի այսպիսի դեպքում մեղուներն սկսում են մեղրուտել։ Այսպիսով, նրանք մի կողմից վատնում են պաշարը, իսկ մյուս կողմից նրանց վորը լցվում է կղկղանքով, վորի հետեւնքների մասին արդեն խոսել ենք։ Ամեն անգամ լիակատար հանգստի կացությունից դուրս գալով և գործունյա դրության անցնելով, մեղուները վատնում են իրենց կենսական ուժերը, վոր նրանց համար այսքան անհրաժեշտ ե։

Գրգուվելիս մեղուների բնական դասավորությունը

կծիկում խանգարվում է. նրանք շաղ են գալիս փեթակում և, չնորհիվ ցրտի, նրանց համար դժվար է լինում կրկին վերականգնել իրենց նորմալ գասավորությունը. շատ մեղուներ կծիկից բաժանվում են, ցրտահար լինում և սատկոտում։

Յեթե մեղվապահը ժամանակին իր մեղուներին ինչպես հարկն է չի հոգացել և ձմեռվա ընթացքում փեթակները շարժում ե, բաց ու խուփ անում նրանց կարիքները բավարարելու համար, դրանով նա խիս վնասում է մեղուներին։

Մկները ձմեռող մեղուների ամենաչար թշնամիներն են. նրանք ուտում են մեղրը, մեղուներին, կտրատում, թափում են չեչերը։ Մեղուները ձմեռը մկներից պաշտպանվել չեն կարողանում, վորովհետեւ պաղած-թմրած են լինում. այն մեղուները, վորոնք կծիկից բաժանվում են, իսկուրն սառչում են, վայր թափվում, ուստի մուկն անպատիթ շարօւնակում ե իր ավերածությունը (յերբեմն մեղուները մկներին այնուամենայնիվ սպանում են, բայց դրանով չպետք է հանգստանալ)։ Յերբեմն մկները փեթակում բուն են գնում և ճտեր հանում։ Բայց մկների պատճառած վնասը միայն ալդ չե. նրանք իրենց աղմուկով և չխիչխիկոցով անհանգստացնում են մեղուներին ու ամբողջ ձմեռվա ընթացքում նրանց պահում են լարված ու գրգուված դրության մեջ. իսկ այդպիսի դրության հետեւնքները մենք լավ գիտենք։

Չմեռվա ընթացքում վերդ խնամելը. — Փեթակում սովորաբար ձմեռելու վերջին ամսում տեղի լի ունենում մի յերեռյթ, վորը շատ մեծ ազդեցություն է գործում ձմեռող ընտանիքի վրա։ Դա այն է, վոր մեղուները գրգում են մորը ձու ածել և սկսում են վորդ խնամել։ Դրա հետ միասին բարձրանում ե ջերմաստիճանը կծիկի

Ներսում. մեղսները գործունյա դրության են անցնում և մեղքի սպառումը խոշոր չափեր ե ընդունում. այս յերեւոյթի նշանակության և ազգեցության մասին մենք պետք ե պարզ գաղափար ունենանք և վորոշենք մեր վերաբերմունքը դեպի այս:

Առաջին հայացքից թվում ե, վոր սա մի նորմալ և նպատակահարմար յերևույթ ե, վորովհետև վորքան մեղուները շուտ են սկսում վորդ խնամել, այնքան շուտ են դուրս գալիս յերիտասարդ մեղուներ՝ փոխարինելու աշնան մեծահասակ, զառամած մեղուներին. վորքան շուտ ե սկսվում վորդի խնամատարությունը, այնքան ավելի ապահովված ե ընտանիքի առավելագույն զարգացումը մինչև գլխավոր մեղրաբերքը. վերջապես, մեր այս կամ այն շահերին զուգագիպում ե այդ յերևույթը, թե վոչ, գուցե դա մի նորմալ և անխուսափելի յերևույթ ե, վորն արդելել՝ կնշանակե խանգարել ընտանիքի կյանքի որինաչափությունը. գուցե, յեթե ուզենք եր, չենք կարող կասեցնել այդ յերևույթը, ուրեմն մենք պետք միայն ընդունենք այն և հաշտվենք նրա հետ:

Ամենից առաջ մեզ պիտի հետաքրքրի մի հարց. գլխավոր մեղրաբերքի սկզբին իրենց զարգացման գաղաթնակետին հասած ընտանիքներ ունենալու համար անհրաժեշտ ե արդյոք, վոր մեղուները դեռ ձմեռոցում սկսեն վորդ խնամել:

Մեր յերկրի լեռնային մասում գլխավոր բերքն սկսվում ե ամենաշուտը հունիսի 18—20-ին (Սուխոլ Թանտան). ավելի հաճախ նա սկսվում ե հուլիսի 15—18-ին (Ծաղկաձորի հովիտը, Սևանա լճի ավագանը). Մեղուները սովորաբար դուրս են գրվում մոտավորապես ապրիլի 15-ին. ուրեմն դուրս դնելուց մինչև բերքի սկզբը տևում ե առնվազն 65 որ, իսկ շատ աեղերում՝ 90 որ և ավելի:

Այդ ժամանակամիջոցում լիակատար հնարավորություն կա ընտանիքն իր զարգացման գաղաթնակետին հասցնելու, միայն թե ձմեռվա ընթացքում նա սպառած չլինի իր պաշարը և կենսական ուժերը և զարգացման ընթացքում նրանք չտուժեն ցրտից և սովորելուց:

Բայց յեթե փեթակները դուրս դնելուց մինչև բերքն սկսվելու ժամանակն ավելի կարճ ել լիներ և ցանկալի լիներ ընտանիքներին դրդել վաղ զարգացման, մենք այդ նպատակին չեյինք հասնի. մեղուներին ձմեռոցում վորդ խնամել տալով. Վորքան ել մեղուները ձմեռոցում վաղ սկսեն վորդ խնամել, մինչև դուրս դնելը նրանք հազիվ կարող են չնչին քանակությամբ մեղու ռռալ. այդ չնչին քանակությամբ վորդը խնամելու համար նրանք վերջին մեկ ամսվա ընթացքում կզործածեն մեծ քանակությամբ մեղը, զործումյա դրության կանցնեն և կվատնեն իրենց կենսական ուժերը, ուստի և սեր վասն ոգուտից շատ կլինի. Տյունինի ստույգ գիտական փորձը միանգամայն հաստատում ե մեր ասածը:

Մեղուները սովորաբար վորդի խնամատարությունը չեն կարողանում հաջող կերպով տանել փակված վիճակում: Դրա համար ել, յեթե մեղուները ձմեռոցում վաղ են սկսում վորդ խնամել, դուրս դնելիս մենք տեսնում ենք, վոր վորդուձուն ցաք ու ցրիկ են լինում և խառնիխուռը: Այդ ապացուցում ե, վոր խնամված վորդերից շատերը փչացել են, յերկի, ինարկե, անհրաժեշտ նյութերի բացակայության պատճառով (ջուր, ծաղկափոշի և այլն):

Մյուս կողմից՝ իր մեղուների կանքին. ուշադիր կերպով հետևած ամեն մի մեղվառահ մեղ հետ միասին կհաստատի, վոր մեղուները վաղ սկսում են վորդ խնամել այն զեպքում, յերբ ձմեռոցը շոգ ե և նրանք անհանգիստ և գրգուված վիճակում են յեղել: Նույնը տեղի յե ունենում

նույնպես այն դեպքում, լեռը մեղուները գրգռվել են ցրտից: Ընդհակառակը, լեթե մեղուները մինչև դուրս դնելու ժամն ընկղմված են յեղել լիակատար հանգստի մեջ և չեն տուժել վոչ ցրտից, վոչ շոգից և վոչ այլ անհանգըստացնող հանգամանքներից, դուրս դնելիս, չնայած լավ լեղանակին, դեռ մեղուն փեթակից դուրս չի թոշում, այնպես, վոր կասկածում ես, թե նա հանգել եւ: Փեթակներից շատերում դեռ մայրը չի սկսել ձու դնել: Դրանից մենք կարող ենք յեղրակացնել, վոր աննպաստ պայմանները դրդում են մեղվին վաղ սկսել վորդի ու ձուի խնամատարությունը և, ընդհակառակը՝ նպաստավոր պայմանները մեղուների համար լիակատար հանգստի կացություն ստեղծելով՝ հետաձգում են վորդ խնամելը:

Մեր այս տեսակետը հաստատում եւ մեղվաբուծության խոշորագույն հեղինակություններից մեկը՝ Թիֆալսը*). Նրա կարծիքը մեզ համար առանձնապես արժեքավոր պիտի լինի, վորովհետև նա խոսում եւ ամերիկան մեղվաբուծության փորձի վրա հիմնվելով, վորտեղ մեղուների ձմեռելը դրված եւ լավագույն հիմքերի վրա:

«Մեղուները յերբեմն ձմեռվա ընթացքում սկսում են վորդ խնամել, վոր սովորաբար հետեանք եւ լինում զանազան արտաքին աննորմալ պայմանների: Վորդի խնամատարությունը պայմանավորում եւ բարձր ջերմաստիճան և դրան համապատասխան, չափից դուրս գործունեյություն՝ ի վետս ընտանիքի: Պետք ե, վորքան կարելի յե, յերկար ժամանակ խուսափել փորդուձու առաջանալուց, քանի վոր մեղուները հնարավորություն չունեն ազատուն թոփչք գործելու:

Դրա հետ միասին չպետք եւ մոռանալ, վոր հաճախ ձվարկությունն սկսվում եւ բացովիա ձմեռող փեթակ-

ներում հենց ցրտերի ժամանակ: Մեղվի ընտանիքի ջերմաստիճանի մասին մեր վերեւում ասածները հաստատում են այն տեսությունը, վոր դրսի չափազանց ցուրան առաջցնում եւ կծիկի ջերմաստիճանի բարձրացում մինչև այն աստիճան, վոր հնարավոր եւ դառնում ձվարկությունը, և վոր այդ մի պատասխան եւ արտաքին ցրտին^{*)}:

Վերն ասածներից մեզ համար պարզ պիտի լինի, վոր՝ ա) թե մեղուների և թե մեր շահերի տեսակետից ձեռնառույթ, վոր մեղուները ձմեռելու վիճակում չսկսեն վորդ խնամել, բ) վոր ձվարկությունը և վորդ խնամելը ձմեռելու ընթացքում վաղ են սկսում աննպաստ պայմանների շնորհիվ և գ) վոր դրանից խուսափելու համար պետք եւ մեղուների համար ստեղծել ձմեռելու նպաստավոր պայմաններ, այնպես, վոր նրանք մինչև դուրս դնելու ժամը գտնվելիս լինեն կիսաընդարձայած (լիակատար հանգստի) կացության մեջ:

Յերբ մեղուների ձմեռելը տևում եւ 5 ամիս և ավելի, հավանութեն ինչպիսի պայմանների մեջ եւ դնելու լինենք նրանց, վերջին 20—25 որվա ընթացքում նրանք մեծ մասամբ կսկսեն վորդ խնամել, բայց յեթե նրանք նպաստավոր պայմանների մեջ են դտնվում, վարդուձուի քանակը շատ սահմանափակ կլինի և նրա զարգացումը նորմալ կընթանա և միևնույն ժամանակ ընտանիքից շատ ուժ և ծախս չի խլի:

Յերբ մեղուները լավ են ձմեռում, դուրս դնելիս նրանցում վորդուձուի քանակը շատ քիչ եւ լինում և վիճակը շատ լավ. այդ նրանից եւ, վոր նրանք ուշ են սկսել վորդ խնամել և քիչ քանակությամբ. վրա շնորհիվ նրանք վորդի խնամքը կարողացել են հաջող կերպով տանել՝ առանց դրսից ջուր և ծաղկափոշի բերելու: Իսկ յերբ վատ

^{*)} Հնդկակաները մերն են:

են ձմեռում, դուրս դնելիս վորդուձուն ավելի շատ մակերես ե բռնում, բայց ցրված ե լինում. այդ յուր հերթին նշանակում ե, վոր մեղուն զաղ ե սկսել վորդուձուխնամել և մեծ քանակությամբ, և վերջինս զարունակ փչացել ե:

Ստույգ փորձով ապացուցված ե, վոր կղկղանքի զգալի կուտակումն առաջացնում ե կծիկի ջերմաստիճանի բարձրացում, վորի հետևանքով մեղուներն սկսում են վորդի խնամել: Ուստի և միանգամայն ընդունելի ի մի լենթադրություն, վոր յերբ ձմեռելու ժամանակամիջոցը կարճ ե (թերեւա 3-4 ամիս), և մեղուները ձմեռն անց են կացնում լիակատար հանգստի վիճակում (լավ ձմեռոց), դուրս դրվելու մոմենտին փեթակներում վորդուձու կարող ե չլինել, մինչդեռ յերբ այդ կացությունը յերկարաւուն է, ինչպես ել լինի, մեղուները կսկսեն վորդուձու խնամել, վորովհետև վորքան ել ձմեռելու պայմանները նպաստավոր լինեն և վորքան քիչ ուտեն մեղուները, նրանցում կղկղանքի կուտակում կառաջանա և նրանց մաքմանի ջերմաստիճանը կբարձրանա: Ավելորդ չենք համարում մեր մի դիտողությունը ևս բերել յերբ ձմեռոցը ցուրտ ե կամ տաք, մեղուները գրգռված են և խիստ աղմկում են, իսկ յերբ ջերմաստիճանը նորմալ ե, մինչև դուրս դնելու մոմենտն ել ձմեռոցում վոչ մի ազմուկ չկա և կծիկը համարված անշարժ ե. Հնայած դրան, դուրս դնելիս մենք փեթակներում վորդուձու գանում ենք, ինչպես ասացինք, լավ վիճակում. այդ նշանակում ե, վոր յերբ ջերմաստիճանը, ուրեմն և մեղուների վիճակը նորմալ ե, սահմանափակ չափով վորդուձու գցելը և խնամելը թեպետ տռաջացնում ե կծիկի ջերմաստիճանի բարձրացում, բայց մեղուներն աննորմալ կերպով բարձր աշխատանքի (մկանացին շարժումների) չեն անցնում և չեն գրգռվում:

Այսպես թե այսպես, այս խնդրի գործնական լուծումը ես այն ե, վոր մենք կարողանանք մեղուներին լիակատար հանգստի վիճակում (ջերմաստիճան) պահել մինչև դուրս դնելը:

Դ. ՄԵՂՈՒՆԵՐԻ ՉՄԵՌԵԼՈՒ ՑԵՐԿՈՒ ՑԵՂԱՆԱԿ

Մեղուների ձմեռելու համար գործադրվում ե յերկու յեղանակ. կամ մեղուներին թողնում են ձմեռելու դրսում հենց իրենց տեղերում, կամ՝ ցրտերն ընկնելիս՝ նրանց տեղափորում են համապատասխան շենքի մեջ մինչև դարուն: Մինչև այժմ դեռևս այս խնդրի շուրջը տարածայնություն կա. վոմանք մի յեղանակի կողմնակից են, ուրիշները՝ մյուս, Մի բանի մասին տարածայնություն չկա, վոր դրսում ձմեռող ընտանիքն անհամեմատ ավելի յեռատում. ըստ Ռուտի՝ յերկու անգամից ավելի (Հանրագիտակ, եջ 232):

Կարծում ենք, վոր այս խնդիրը լուծելու համար պետք ե հաշվի առնել յերկու հանգամանք. ա) տեղի կիմայական պայմանները և բ) այն հարմարությունները, վոր իր տրամադրության տակ ունի տվյալ մեղվաբուծական տնտեսությունը:

Մեղուների ձմեռալին խնամքի ամբողջ իմաստը մենք կարող ենք մեկ նախադասությամբ ձևակերպել. ձմեռելու ամբողջ ընթացքում (հանգստի շրջան) մեղուներին պետք ե պահել լիակատար հանգստի կացության մեջ (կիսաընդարձակացած դրություն): Մենք արգեն դիտենք, թե ինչ հանգամանքներ են խանգարում մեղվի հանգիստը, ուրեմն և կարող ենք մեղուներին ապահովել բոլոր աննպաստ հանգամանքներից. դրանցից ամենազիավորը ջերմաստիճանի խնդիրն եւ Զի կարելի վիճել, վոր ջերմաստիճանի սուր տատանումներից մեղվին լիովին ապահովել և ամ

բողջ հանգստի շրջանում նրա համար միապաղադ ու նպաստավոր ջերմաստիճան ստեղծել հնարավոր և միայն շենքի մեջ։ Առողջ գատողությունը մեզ ասում ե, վոր ինչպիսի պայմանների մեջ ել դնենք մեղքին, գրսում ձմեռելու դեպքում մենք նրան ջերմաստիճանի տատանումներից լիովին ապահովել չենք կարող և այդ տատանումներն ավելի կամ պակաս չափով կանդրադառնան մեղուների։ Քրա:

Ի՞նչ դեպքերում մեղուներին տնիրամեց և քողին դրւեսը ձմեռելու։ — Միայն այն գեպքում, յերբ ձմեռն այնքան մեղմ ե, վոր մեղուների վրա ցուրտն ազդեցություն չի կարող ունենալ, մինչդեռ ներսում մեղուն կտուժի տաքից. գերադասելի յէ մեղուներին թողնել դրսում։ Կան տեղեր, վորտեղ համարյա թե ձմեռ չի անում, միայն յերբեմն ձյուն ե գալիս և շուտով հալվում. մեղուները հնարավորություն ունեն յերբեմն թոփչք գործելու, մաքրվելու իրենց ստամոքսում հավաքված կղկղանքից. նրանք դրսի թարմ ողում իրենց լավ են զգում. յեթե մենք արդպիսի պայմաններում մեղուներին շենքի մեջ դնենք, ջերմաստիճանը չենք կարող հարմարեցնել մեղքի պահանջներին. ձմեռոցում ողը տաք կլինի. իսկ թե ինչ ազդեցություն կունենա այդ բանը մեղուների վրա, մենք արդեն գիտենք (մոլորություն կլինի կարծել, թե մեղուները ձմեռը կամ վաղ գարնանը կարող են վորսե ոգտակար աշխատանք կատարել)։ Անգրկովկասում այդպիսի վայրերի թվին պետք ե դասել Սև ծովի ծովափնյա մասերը, ինչպես Բաթումը, Սուխումը, Կասպից ծովի ափերը, ինչպես Մախաչկալան և մանավանդ Լենքորանը. բացի դրանից, նաև այն տեղերը, վորոնք թեպետ և ծովերից հեռու յեն, բայց կլիմայական տեսակետից գտնվում են ծովային քամի-

ների ազդեցության տակ, ինչպես, որինակ՝ Թիֆլիսը, Յեղախիւր և այլն։

Ինչ դեպքերում մեղուներին կարելի յե քողնել դրսում ձմեռելու։ — Ավելի ցուրտ տեղերում ել մեղուներին կարելի յե թողնել դուրսը. ահա թե ինչ և ասում այդ մասին ե. Բերտրանը։

«Մեր յերկրում (Եվելյարիայում) մինչև իսկ ամենաբարձր տափաստաններում, վորտեղ ցրտերը հասնում են 20-ից մինչև 25 աստիճանի ըստ ծելսիուսի, մեղուների բացությա ձմեռելը վոչ մի դժվարություն չի ներկայացնում։ Զյունով ամբողջովին ծածկված փեթակները կարող են ամիսներով այդ դրության մեջ մնալ և մեղուն զրանից բոլորովին չի վնասվի»։

Սակայն այս տեսակետը մենք կարող ենք հնացած համարել. նա հիմնված չե գիտական տվյալների վրա։ Բերտրանից հետո ձմեռելու խնդրի գիտական ուսումնամիրության վրա շատ մեծ աշխատանք ե կատարված։ Ամերիկայի ժամանակակից լավագույն մասնագետներից մեկը ե. Ֆիլիպսն այդ մասին ասում ե. «Յեթե տվյալ տեղում հունվար ամսին միջին ջերմաստիճանը տատանվում ե 4-ից 9,5-ի սահմաններում, մեղքապահը կարող ե հնարավոր համարել մեղուների ձմեռելը ձմեռոցում. իսկ յեթե այդ ջերմաստիճանը — 9,5-ից ցածը ե, մեղուների ներսում ձմեռելը դառնում ե համարյա պարտադիր»։

Այստեղ մենք պետք ե նշենք, վոր, բացի կլիմայական պայմաններից, խնդրի լուծման համար վճռական նշանակություն ունեն նաև տվյալ կոլտնտեսության կամ խորհունտեսության ուեալ հնարավորությունները. յենթադրենք մենք ստուգ տվյալներ ստացանք, թե տվյալ տեղում հունվար ամսին միջին ջերմաստիճանը հավասար ե — 11-ի. ըստ այդմ մենք սկզբունքորեն վորոշում ենք մեղուներին

ձմեռը պահել ներսում. բայց մենք վոչ միայն գիտական հիմունքներով կառուցված ձմեռոց չունենք, այս վորևէ շենք, վորը փոքրիշատե տանելի կերպով կարելի լիներ հարմարեցնել մեղուների պահանջին, մինչդեռ հնարավորություն ունենք փեթակները համապատասխան կերպով հարմարեցնել (տաքացում) բացոթյա ձմեռելու համար: Այդ դեպքում չարիքների փոքրագույնը կլինի մեղուների բացոթյա ձմեռելը: Հեղինակը, մի տարօւց ավելի աշխատելով Գանձակում, լեկել ե այն յեզրակացության, վոր անգամ այլտեղ՝ խաղողի, նուան և թղի հայրենիքում մեղուների շենքի մեջ ձմեռելն ավելի ոգտավետ ե. 33-34 թվին մի մեծ մեղվանոց. (200 փեթակ) գտնվում եր մի աղյուսաշեն կամարակաղ կիսանկուղում և դուրս դրվելիս հիանալի վիճակի մեջ եր. մարտի սկզբին այդ նկուղում ջերմաստիճանը + 5 եր:

Համենախն դեպս մեր մեղվարուժական արտադրության ներկա ռեալ վիճակը նկատի առնելով, կարելի յե նապատակահարմար համարել մեղուների բացոթյա ձմեռելը կոռվա, Դիլիջանի, Իջևանի, Շամշադնի, Զանգեզուրի, Ղափանի, Բնչպես նաև Լեռնալին Ղարաբաղի ցածրադիր տեղերում: Ինչ վերաբերում ե այնպիսի տեղերին, ինչպես Փամբակը, Ստեփանավանը և այլն, մենք առանց տատանվելու հառաջարկելինք այդ տեղերում մեղուներին ձմեռը պահել շենքերի մեջ: Անձնական փորձով առիթ ենք ունեցել համոզվելու, վոր այդ տեղերում խիստ ձմեռները հազվագյուտ չեն:

Այս խնդրի հատուկ ուսումնասիրությամբ մենք չենք դրազվել: Վորքան մեզ հալտնի յե, Հայաստանի Մեղվարուժական կայանը և խորհուտեսություններն ել այս խնդիրներով չեն զբաղվել, ուստի և մեր ձեռքի տակ չկան նյութեր՝ մեր յերկրի զանազան վայրերի նկատմամբ

վորոշակի լեզրակացության գալու համար: Ասելու համար, թե վորն ե ավելի ընդունելի, որինակ՝ Շահալուի համար՝ մեղուների բացոթյա ձմեռելը, թե ձմեռոցում, պետք ե ունենալ վոչ պակաս, քան ձմեռվա Յ տարիների միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, պետք ե ունենալ սառցեց թվեր, թե ձմեռվա ընթացքում մեղուները քանի՞ անգամ են թոփչք անում, յեր՞բ են ընկղմվում հանգստի կացության մեջ և յերբ են անցնում գործունյա դրության, թե վորքան պաշար են սպառում ձմեռոցում և դրսում և այլն: Ուստի և մենք հարկադիված ենք խորհուրդներ տալ մեր գործնական գիտողությունների և ձեռք բերած արդյունքների վրա հիմնվելով: Մեր տված ցուցմունքները կլինեն որինտիր և տեղերում աշխատողները խնդիրը պիտի լուծեն համաձայն ա) այդ որիենտիր ցուցմունքների, բ) իրենց արտադրական վորձի, գ) իրենց ռեալ հնարավորութունների, մինչեւ խնդրի գիտական ուսումնասիրությունը և լուծումը:

Հասկանալի յե միանգամայն, վոր խիս ցուց տեղերում մեղուների դուրսը ձմեռելը միանգամայն անբռույլատերների յե, չնայած վոր մեղուներն այդ ցրտերին մի կերպ կարող են դիմանալ. անգամ Սուխոյ-Ֆանստանում, վորտեղ խիստ ձմեռ և լինում, Իվան Շերշովի մեղվանոցը մի քանի տարի դրսում եր ձմեռում և ինքը շատ գոհ եր ստացված արդյունքներից: Յեթե մենք առում ենք, վոր այդպիսի տեղերում մեղուներին դուրսը թողնել չի կարելի, դրանով բոլորովին չենք ուղարկ ասել, թե մեղուները բացոթյա ձմեռելու ընդունակ չեն և անխստիր կկոտորվեն — կոչնչանան. մենք միայն ասում ենք, վոր այդ տեղերում հարմարավոր ձմեռոցում դրված մեղուների դրությունն անհամեմատ ավելի նպաստավոր և արդյունավետությունն ավելի բարձր կլինի:

Պետք ե նշել, վոր մեր լեռկիրը Փոքը կովկասյան և ունաշղթայով յերկու կլիմալական գոտու յե բաժանվում։ Մինչդեռ այդ շղթայից հրուսիս (Քոի ավազան և Արաքսի ավազանի մի մասը) և արևելք կլիման ավելի մեղմ ե և համեմատաբար ավելի խոնավ, նրանից հարավ (Արարա- տյան դաշտ, Դարձագյաղ, Սևանա լճի ավազան և այլն) կլիման ցամաքային ե և բավական խիստ. այս գոտում ահա, մինչեւ իսկ դաշտային մասերում (խաղողի և բամ- բակի գոտի) մեղուների ներսում ձմեռեն անհրաժեշտու- թյուն ե։

Ե. ՄԵՂՈՒՆԵՐԻ ԶՄԵՌԵԼԸ ԴՐՍՈՒՄ

Մեղվի ընտանիքը դրսում կարող ե հաջողությամբ ձմեռել միայն այն դեպքում, յեթե նա բավական հա- րուստ և մեղվով և յեթե լիովին ապահովված ե պաշարով, իսկ թույլ ընտանիքները իխստ տուժում են ցրտից, մինչդեռ ուժեղները շատ լավ են զգում իրենց. ուստի և թույլ ընտանիքներն ավելի լավ ե ներսը դնել ձմեռելու։

Փերակների սարելլը.—Վոմանք մեզնում ընտանիք-ներին թողնում են ձմեռելու առանց վորեե տաքացման։ Այսպես եր ձմեռել Փամբակում գալինողրամնի մեղվա- նոցը 1930-31թթ.ձմեռը։ Ուրիշները մեղուներին թողնում են 10—12 շրջանակի վրա, նույնպես վոչ մի տաքացում չեն դնում կողքերից և մեղուներն այդպես ձմեռում են։ Կարծում եմ մեր ասածներից բավական պարզ պիտի լի- նի, վոր այս ձեռվ մեղուներին ձմեռը պահելը միանդա- մայն անթույլատրելի յե։ Իսկ վոմանք շրջանակները դնում են ընի մեջտեղը, աջից և ձախից դնում են միջնատախ- տակներ, վորոնց լեռեի դատարկ տարածությունը լցնում են ծղոտով, իսկ վերեից դնում են ծղոտից պատրաստած բարձ (соломенныи мат) մոտ 60 մմ հաստությամբ։

Կասկած չկա, վոր այսպիսի տաքացումը պետք է ընդունել անբավարար։

Նախ պետք ե ծղոտը փոխարինել գարմանով։ Առա- սարակ, վորպես տաքացման նյութ արտասահմանումն եղ գործ ե ածվում ծղոտ, խզարի թեփ, չոր տերկներ և ալին, բայց մեր լեռկարատե և բազմակողմանի փորձերը մեզ բե- րին այն յեզրակացության, վոր դարմանը վորպես տաքաց- ման նյութ գերազանցում ե այդ բոլորին։ Ուրեմն ծղոտի փոխարեն միջնատախտակների յետեր դարձան պետք ե լցնել։ Վորպեսզի փեթակը չկեղադուի, մենք դարմանը դնում ենք տոսլրակներով. վերեից մենք դնում ենք վայտլա շրջանակ ունեցող մի բարձ, վորի մեջ նույնպիս դարման ե լցրած։

Առասարակ դարմանը պետք ե ճանաչել վորպես տաք- նակարգ տաքացման միջոց. մեր գյուղացիներն ամառը սարերից ձյնենը բերում են և դարմանը լցնելով թոնիրը, նրա մեջ պահում են մինչեւ մեկ շաբաթ. այդ բավական ե տպացուցելու համար, թե վորքան վատ հաղորդիչ ե դարմանը։

Տաքացնելու այս յեղանակը մենք գործադրում ենք գարնան ընթացքում, բայց բացովիա ձմեռելու համար այդ յեղանակն անզամ պետք ե համարել անբավարար։

Տաքացնելու ամենից կատարյալ ձև պետք ե հա- մարել հետեւյալը, վոր այժմ ընդունված ե Ամերիկայում. այդ այն ե, վոր փեթակը տեղավորում են փայտյա պա- տյանի մեջ այնպես, վոր փեթակի 6 կողմից գոյանում ե դատարկ տարածություն և այդ դատարկ տարածությունը լցնում են տաքացնող նյութով։ Մեղնում, ինչպես ասա- ցինք, ամենահարմար նյութը դարմանն ե։ Խնայողու- թյան համար ալժմ ընդունված ե մի պատյանի մեջ ամփո- փել 4 փեթակ։ Ուուաը գտնում ե, վոր փեթակների տակը

տաքացնող նյութի շերտը պետք ե լինի վոչ պակաս, քան
10 սմ, կողերից՝ 15,6 սմ, իսկ վերեկց՝ 26 սմ:

Մեր փեթակներն այս կերպ սարքելիս անհրաժեշտ ե
կտուքը վերցնել. բարձը կարելի յէ թողնել և փեթակը
վերից ծածկել դարձանով ու ընդհանուր կափարիչով:

Ամերիկայի հայտնի մասնագետ Դեմյոտսը գործադ-
րում ե մի շատ սրամիտ և անշուշտ ավելի հեշտ իրագոր-
ծելի միջոց. դիկտից շինվում են յերկարավուն արկղներ,
վորոնց մեջ կողքի վրա տեղափորվում ե 8 շրջանակ: Այս
արկղի հատակին դրվում ե մի ծող, վորի վրա շրջանակ-
ները հենվում են և վորի շնորհիվ շրջանակների տակ տուա-
շանում ե անհրաժեշտ դատարկ տարածությունը (ըստ Ռու-
տի՝ 5 ամ): Ըստանիքն ամփոփվում ե այս արկղի մեջ. պարզ
ե, վոր շրջանակներն իրենց լեռեի կողքերով դարձած են
դեպի վեր. ալդ կողմից շրջանակները ծածկվում են ծած-
կոցով. ապա փեթակի հատակը ծածկում են տաքացնող
նյութի համապատասխան շերտով, վորի վրա դնում են
այս արկղը: Իհարկե, այս արկղն անցը ունի, վորը համա-
պատասխան հարմարանքի միջոցով միանում ե փեթակի
արկանոցին, վորպեսզի մեղուները դրսից ոդ տառնան և
վաղ գարնան տաք որերին թոփչք գործեն. ապա փեթա-
կի մեջ, արկղի չորս կողմը լցնում են տաքացնող նյութ,
փեթակի վրա դնում են ևս մի կորպուս և մի վերնա-
հարկ, վորպեսզի արկղն ամբողջովին պատվի տաքացնող
նյութով, վորի շերտը հաստ պիտի լինի, մանավանդ վերե-
վից. յերբ տաքացումը դրված ե, ծածկում են փեթակի
կտուքը:

Ինչպես Ռուտը, այնպես և Ֆիլիպու շատ գոհ են այս
յեղանակից. մենք մեր տնտեսություններին խորհուրդ
կաայինք փորձել և կիրառել այս յեղանակը, վորն ան-
շուշտ մեծ առավելություններ ունի:

Ելուս յեղանակները՝ փեթակը ծղոտով փաթաթելը
կամ կը կնակի պատերով փեթակներ շինելը, պետք ե հա-
մարել անըավարար. մենք կզգուշացնելինք մանավանդ
կը կնակի պատերով փեթակներ գործածելուց. նրանք ծանր
են ու անճուռնի, միւնուույն ժամանակ մեղուներին լիո-
վին չեն ապահովում ձմեռալին ցրտից: Վյատկայից մի ժա-
մանակ ստացվում ելին այդպիսի փեթակներ. կարծում ենք
մի անգամ բավական ե տեսնել այդ փեթակները՝ նրանցից
ընդմիշտ հրաժարվելու համար:

Յերբ մեղվագահն իր փեթակները սարքում ե ձմեռվա
համար, պետք ե հույս չդնի, թե ձմեռը կարող ե մեղմ
լինել. նա պետք ե նախապատրաստվի ամենախիստ ձըմ-
ուան, վոր կարող ե լինել տվյալ տեղում և դրա համապա-
տասխան ել հարմարեցնի իր փեթակները: Յեթե ձմեռը
մեղմ կլինի, նրա մեղուները տաք սարքված լինելուց չեն
տուժի, մինչդեռ յեթե նա իր փեթակները տաք չի սար-
քել, յեթե ձմեռն սպասածին հակառակ խիստ ցուրտ լինի,
մեղուները կարող են փշանալ: Պետք ե նկատի առնել նաև,
վոր ձմեռը մեղուներին վորեւ ոգնություն հասցնել
չի կարելի, յեթե անգամ նրանք կոտորվելիս լինեն, վորով-
հետև փեթակում վօրեւ աշխատանք կատարել, մանա-
վանդ յերբ նա գտնվում ե դրսում, անհնարին ե:

Իհարկե, վերևում ցուց տված յեղանակները պահան-
ջում են բավական խօսոր դրամական ծախս և նյութ,
բայց այս խնդրում պետք ե զեկավարվել այն սկզբունքով
վոր եժան ե այն յեղանակը, վորը բարձրացնում և
եժանացնում ե արտադրանքը: Վորովինետև մենք ալդ յեղա-
նակներով կարող ենք խնայել լուրաքանչուր փեթակի պա-
շարից առնվազն 2 կգ մեղմ (իրականում անհամեմատ
ավելի շատ), ուրեմն մեկ տարվա ընթացքում մենք կծած-

կենք մեր բոլոր ծախսերը և ամբողջ սարքավորումը մեզ
կմնա ձրի:

Հասկանալի յե, վոր վորքան տեղի կլիման տաք ե,
այնքան տաքացումն ավելի թեթև կարող ե լինել և ընդ-
հակառակը: Բայց Հայաստանում, մինչև իսկ ամենատաք
տեղերում կլիման այնքան փափուկ չե, վոր մենք ավե-
լորդ համարեյինք տաքացման ամենահիմնավոր ձևերը:

Նորմալ ոդափոխություն սարքելու համար անհրաժեշտ
ե մոմաշրջ կամ տախտակա ծածկը փեթակի վրայից
վերցնել և շրջանակները ծածկել մի ծակոտկեն կտորով,
իսկ վրայից դնել հարդար լցված բարձր: Արկանոցը պետք
ե բաց լինի, բայց փոքրացրած: Յեթք փեթակն ամփոփում
եք պատրանի մեջ, պետք ե արկանոցի առաջ հատուկ
անցք սարքել (սիջանցք):

Ֆիլիպսն արկանոցի դիմաց, պատրանի մեջ 5 հատ
կլոր անցք ե սարքում, վորոնցից՝ խիստ ցրտերի ժամա-
նակ՝ չորսը ծածկում ե, մեկը թողնում բաց, իսկ մնացած
ժամանակ բաց անցքերի թիվը հարմարեցնում ե մթնո-
լորտի ջերմաստիճանին: Յեթե արկանոցը բռնփում ե սառ-
ցով և մեղուների դիմակներով, յերբեմն պետք ե մաքրել
բայց զգուշությամբ, վորպեսզի մեղուները չանհանգոտա-
նան:

Վորպեսզի ձմեռվա պայծառ որերին, մանավանդ գար-
նան կողմը, յերբ որերը տաքանում են, մեղուներն արեի
ճառագայթներից դրդված դուրս չթուշեն և չկոտորվեն,
պետք ե մի տախտակով արկանոցի վրա հով անել:

Մկներից պաշտպանելու համար պետք ե կտուրի
ողանցքները մետաղացանցով պատած լինեն. արկանոցն
8 միլիմետրից ավելի բարձր չպետք ե լինի:

Փեթակներին ձեռք չպետք ե տալ, թիվոց չանել և
առհասարակ չանհանգոտացնել նրանց: Լավ ե, յեթե մե-

զուները դասավորված են մեծ ճանապարհներից հեռու և
գեանի ցնցումներից (կառքերի անց ու գարձ) ազատ են:

Զ Մ Ե Ռ Ո Յ Տ

Մեղուներին լավագույն դեպքում դնում են
ձմեռելու վորեւ պատահական շենքում՝ սենյակում, մա-
րագում, խրճիթում և ալլի: Այդպիսի շենքերում ջերմաս-
տիճանը քիչ ե աարբերվում դրսի ջերմաստիճանից, և
մեղուները ձմեռվա ընթացքում տանջվում են ցրտից, իսկ
գարնան մոտերքն ոդը տաքանում ե և մեղուներն սկը-
սում են նեղվել շոգից: Բայց այդ դեռ լավ ե, վորովհետեւ
մեղուների տեղն առանձին ե: Հաճախ նրանց դնում են
հենց թոնրատները, վորտեղ իրենք են ապրում, կամ մի
այնպիսի տեղ, վորտեղով անց ու դարձ են անում (նա-
խասենյակ, միջանցք) և, վերջապես՝ մառան կամ նկատ,
վորտեղ մարդիկ հաճախ գնում-գալիս են: Այդ տեղերում
քայլում են, գոփում, ցախ ճղում, դիպչում են փեթակ-
ներին և խանգարում նրանց հանգիստը: Թոնրատներում
ծուխ ե լինում*), ցուրտ, տապա՝ տաք. յերբեմն ոդը հագե-
ցած ե լինում գոլորշիներով և ալին. մառաններում և
նկուղներում հաճախ խոնավ ե լինում, ոդը՝ ծանր և հագե-
ցած սոխի, կաղամբի, քացախի և ալլ հոտերով: Ճիշտ ե,
մեղուները մի կերպ այս պայմաններում անց են կացնում
ձմեռը, բայց ընտանիքների բավական զգալի տոկոսն ա-
մեն տարի հանգչում ե, իսկ մնացածները շատ պաշար են
սպառում և շատ մեղու կորցնում: Դուրս դրվելու մոմեն-
տին մեղուները փեթակում զառամած են լինում, հյուծված
և հիվանդ (փորլուծ). բոլոր փեթակներում վորդուձու կա,
բայց ցաք ու ցրիվ, խառնիխուռն:

*) Ծխ ազդեցաւքյունը մեղուների վրա ձմեռվա ընթացքում ուղղակի-
կորսարբեր ե

Այս տողերը գրված են յեղել 1930 թվին, յերբ մեզ ժողովում գոչ մի մեղվարուծական խորհութեասություն, ինչպես նաև մեղվարուծական կալան չկար, իսկ կոլտընտեսային մեղվանոցներն իրենց սկզբնական կազմակերպչական շրջանն եյին ազդում։ Դրանից հետո սոցիալիստական մեղվարուծությունը խոշոր չափով աճել է թե կոլտնտեսություններում, թե նոր կազմակերպված մեղվարուծական խորհութեասություններում, ինչպես և պետական դանագան տնտեսություններին և հիմնարկներին կից՝ վորպես ոժանդակ ճյուղ։ Ներկայումս սոցսեկտորում վեթակների թիվը 25.000-ից անցնում է, բայց խոշոր նվաճումների հետ միասին մեր մեղվարուծությունն ունի խոշոր թերություններ, հատկապես տեխնիկայի բնագավառում։ մինչև հիմա դեռևս Հայաստանում գոյություն չունի վոչ մեկ հատուկ ձմեռոց, վոր կառուցված լինի ժամանակակից մեղվարուծության գիտա-տեխնիկական հիմունքների համաձայն։ մեղուները ձմեռում են պատահական շենքերում, ինչպես առաջ, և այդ հանգամանքը խոշոր չափով նվազեցնում է մեղվարուծության արդունավետությունը։ 1931-32 թվին Փարաքարի այգեգործական տնտեսության մեղվանոցը ձմեռում եր մի սարալի մեջ, վորտեղ շաբաթներով ջերմաստիճանը — 12 եր, իսկ յերբեմն իջնում եր մինչեւ — 18. Նույն թվին Աշտարակի խորհութեասության մեղուները ձմեռում ելին մեծ քարձության մի շենքի մեջ (նախկին ողեգործարան) և այդտեղ ջերմաստիճանը նույնն եր. արկանոցներից գուրս հոսած ջուրը և գոլորշին սառել եր և ձեռքաչափ սացի հաստ շերտ կազմել։ 1932-33 թվին մեղվ. կայանի փեթակները Փաշի գլուղում դրվել ելին ձմեռելու նախապատմական գոմերում։ Մինչդեռ անասնապահության մյուս ճյուղերի սոցվերակառուցումն ընթանում է ռացիոնալ հիմունքներով, մինչդեռ ամեն տարի

կոլտնտեսություններում ու խորհութեասություններում հարյուրավոր զոմեր են շինվում, մեղուները մեզնում ձմեռում են այնպես, ինչպես ձմեռում ելին տուաշներում՝ անհատ գյուղացիների մոտ, իսկ հաճախ՝ դրանից ել ավելի վատ։

Թվում ե, թե ժամանակն ե, նշելով մեր մեղվարուծության ահազին նվաճումները, վճռականորեն շեշտել նաև այդ աղաղակող թերությունը և մեր խորհութեասությունների ու կոլտնտեսությունների ուշադրությունը կենտրոնացնել այդ անհետաձգելի հարցի լուծման վրա։

Նախքան դիմելն այն հարցին, թե ինչպես պետք է սարքել լավ ձմեռոցը, թվենք այն պահանջները, վորոնց նա պետք է բավարարի։

1. Ջերմաստիճանը պետք է լինի նպաստավոր և միապաղաղ՝ ծելսիուսի +6-ից մինչև +8. Ջերմաստիճանի տասանումներ չպիտի լինեն։

2. Ձմեռոցում ողը պետք է լինի բացարձակորեն մաքուր, ողափոխությունը՝ լավ։

3. Ձմեռոցում խոնավության հետք անգամ չպետք է լինի։

4. Մեղուները պետք է ձմեռեն լիակատար խավարի մեջ։

5. Վոչ մի ցնցում, վոչ մի թխկոց չպետք է անհանգըտացնի մեղուներին։

Ամեն մի կոլտնտեսական շատ լավ գիտե, վոր սովորական շենքերում սենյակում, մարագում, գոմում (յեթե վերջինում անասուններ չկան), յեթե ձմեռը վառարանն անընդհատ կերպով չվառվի, համարլա նույնքան ցուրտ կլինի, վորքան դրսում. նու լուր սոխն ու կարառֆիլը լերբեք այդպիսի շենքի մեջ չի դնի։ Ամեն մեկին շատ լավ հալտնի յե նույնպես, վոր յեթե մի սովորական փոռ փո-

րենք և կարտոֆիլը կամ ուրիշ արմտիք նրա մեջ դնենք՝ նրանք ցրտից միանգամայն ապահովված կլինեն. Ամեն մեկը շատ լավ գիտե նույնպես, վոր ամենաղաժան ցրտերին անգամ սառչում ե միայն գետնի յերեսի շերտը՝ ամենաշատը՝ $1/2 - 3/4$ մետր, իսկ դրանից ցած զետինը չի սառչում: Զմեռն աղբյուրների ջուրն անխափան հոսում ե և մեզ թվում ե, թե նա ավելի տաք ե, քան ամառը:

Ամառը, ընդհակառակը, սովորական շենքերում խիստ շոգ ե, իսկ նկուղներում, ջրհորներում՝ հով, աղբյուրների ջուրը՝ սառը, և այլն: Այս պարզ առողյա դիտողությունները մեզ սառւմ են, վոր յեթե մենք ուզում ենք, վոր ջերմաստիճանը ձմեռոցում լինի միապաղաց՝ ձմեռը տաք, իսկ զարնան տաքերին՝ հով, ապա մեղուներին ձմեռելու համար պետք ե իջեցնենք գետնի տակ և այնքան խորը, վոր ձմեռոցն ամբողջովին լինի սառող շերտից ներքեւ:

Լավագույն ձմեռոցը գետնափոր ձմեռոցն ե. Միայն գետնափոր ձմեռոցը կարող ե բավարարել վերեւում թված պահանջները: Լավագույն ձմեռոցներ լինում են ամերիկացիները:

Դետնափոր շինության մեջ ամենախիստ ցրտերին անգամ մեղուների արտադրած տաքությունը միանգամայն բավական ե, վոր ջերմության աստիճանը պահանջված բարձրությունից չի ջնի: Դարնան կողմը միայն գետնափոր շինության մեջ կարող ե ջերմության աստիճանը շատ չբարձրանալ. ըստ Ռուտի՝ լավ սարքած գետնափորում ջերմաչափը ցուց է տալիս $+7^{\circ}$, մինչդեռ դուրսը, ստվերում անգամ ջերմաստիճանը $+27$ ե: Ողափոխությունն ուժեղացնելու և սահմանափակելու միջոցով ես կարելի յե ջերմաստիճանը կանոնավորել:


Գետնափորի համար պետք ե ընտրել վորքան կարելի լի չոր տեղ, բայց մինչև իսկ մի այդպիսի տեղ ճարելու

զեսքը ում ել պետք ե վորոշ միջոցներ ձեռք առնել, վոր ձմեռոցը խոնավությունից բոլորովին զերծ լինի:

Դրա համար, նախ, հատակը կես մետր խորությամբ պետք ե լցնել լեռ քարերի գլխաչափ կտորներով, յերեսը խիճ փոել և խճի վրայից սվաղ քաշել: Այս ձեռվ գետնի մեջ պարունակվող խոնավությունն այլևս ծծվել, վեր բարձրանալ և հասնել հատակին չի կարող: Միենուն կերպով պետք ե կտրել խոնավության ճանապարհը պատերի կողմից. դրա համար նրանց լեռեր նույնպիսի քարեր պետք ե լցնել: Վորպեսզի խոնավությունը պատերի միջով վերև չբարձրանա, պետք ե սլատերը շարել լեռ քարով և վոչ տուփով (քավանդ) և վոչ ել կրօվ, առ սովորական կավով: Այս կողմից ավելի ապահով լինելու համար պետք ե, պատերի հիմքը զնելուց հետո, հատակի մակերեսութից քիչ ցած մի շարք մեծ սալեր շարել և սպառալ շարունակել այդ սալերի վրալից:

Ամերիկացիները ձմեռոցի համար վորպես շինանյութ գործ են ածում ցեմենտ և զրա շնորհիվ նրանց ձմեռոցները խոնավությունից բոլորովին զերծ են:

Ռուսաստանում գետնափոր փոսի պատերը պատռմ են տախտակներով և դրանով բավականանում: մենք այդ գտնում ենք միանգամայն անթուլատրելի: Յես հունիս ամսին մտա չլուս, կովկ. մեղք. կայանի ձմեռոցը (Նովօչերկասկի մոտերքում), վոր հենց այդ ձեռվ եր սարքած. այդտեղ ողն անտանելի ծանը եր և խոնավ: Յես կգերադասեյի իմ մեղուները ձմեռը թեկուզ մի սովորական մարագում պահել, քան այդպիսի գետնափորում: Մենք առանձնապես շեշտում ենք գետնափորը խոնավության միանգամայն անթափանց դարձնելու անհրաժեշտամար



Նկ. 4. Գիշեավանդ ձմեռուց

տությունը, վորի համար մեր ցուց տված ձեզ միանգամայն բավարար ե:

Առաստաղը գետնի սառչելու շերտից ցածր պետք ե լինի, իսկ հողի շերտը՝ վորքան կարելի յե հաստ (ըստ Ռուտի՝ 120 սմ):

Առանձին ուշադրություն պետք ե դարձվի ողափոխության խողովակների վրա. նրանցից մեկը վերջանում ե հատակից մեկ կամ մեկ ու կես թիզ բարձրության վրա, իսկ մյուսը՝ հենց առաստաղի տակ. առաջինով պաղ ողը ներհոսում ե ձմեռոց. իսկ մյուսով տաք ողը դուրս ե գալիս ձմեռոցից: Խողովակները լավ ե շինել փայտից. նրանց կտրվածքը հավասար ե այնքան քառակուսի դյույմի (մեկ դյույմը հավասար ե 25 միլիմետրի), վորքան փեթակ դրվում ե ձմեռոց խողովակները պետք ե ունենան փայտյա խուփեր, վորոնցով կարելի լինի խողովակները փակել կամ բացել, փոքրացնել կամ մեծացնել ըստ ջերմաստիճանի: Խողովակները պետք ե հարմարեցրած լինեն այնպես, վոր նրանցով լույս չընկնի ձմեռոց (կտրի վրա յերկու կամ յերեք ծունկ): Նկար 4-ում ցույց է տված դրսից ող բերող խողովակների մի ուրիշ ձե, վոր ընդունված ե Ամերիկայում. ըստ այդմ խողովակը ձմեռոցից բավական հեռու ուղղաձիգ իշնում ե ձմեռոցի հատակի զծից ցած, ապա ծունկ տալիս գետնի տակով գալիս ե ձմեռոցի տակ և դարձյալ ուղղաձիգ բարձրանում վեր. դրա առավելությունն այն ե, վոր դրսի պաղ ողն ալս ստորերկրյա ճանապարհորդությունը կատարելու ընթացքում բավական տաքանում ե մինչև ձմեռոց մտնելը:

Յեթե գետինը քար ե կամ խոնավ, այնպես վոր գետնափոր ձմեռոց շինել հնարավոր չե, կարելի յե ձմեռոցը շինել նաև կիսագետնափոր կամ ամբողջովին գետնի յերեսին, բայց այդ գեպքում անհրաժեշտ ե հողի

հաստ շերտով ծածկել այն, այնպես, վոր հողաբուք ստացվի՝ բայց հողաշերտի և պատերի արանքը լցնել լեռ քարերով, ինչպես ասված ե գետնափոր ձմեռոցի նկարագրության մեջ։ Զմեռոցում դուռը պետք ե սարքել այնպես, վոր նա անմիջապես գեպի դուռս չբացվի, այլ մի նեղ միջտնյքի մեջ, վորը միջանցքի հակառակ ծայրում վերջանում ե բացվող դռնով, այսինքն՝ գետնափորի դռնից վորքան կարելի յե հեռու։

Ըստ Ֆիլիպսի՝ «ձմեռոցի ծավալը պետք ե այնպես լինի, վոր յուրաքանչյուր փեթակին զա մոտավորապես 0,4 խոր. մետր. իսկ յեթե ամեն մի փեթակին ընկնում ե ավելի մեծ տարածություն, նրանց համար դժվար ե լինում պահպանել անհրաժեշտ ջերմաստիճանը», և այդ վորպես նորմա ընդունելի լիւ Զմեռոցի լայնքը պետք ե վերցնել 3,6 մետր, վորտեղ 4 շարք փեթակ ե տեղափորվում և 2 հատ միջանցք ե մնում, յուրաքանչյուրի լայնքը 0,6 մետր, իհարկե, յեթե կտուրների ծածկը և արկանոցատախտակն անձոռնի յերկար չեն։ Զմեռոցի բարձրությունը պետք ե անել այն հաշվով, վոր իրար վրա տեղափորվի 4 լանգստրոտի կամ 3 Դադանի փեթակ։ Դրա համար յերկու մետրը բավական ե. այսպիսավ մի զծի վրա կտեղափորվի 16 լանգստրոտի կամ 12 Դ.-Բլատի փեթակ։ Զմեռոցի յերկարությունն արդեն կախված ե փեթակների ընդհանուր թվից։

Նկատի առնելով, վոր առայժմ մեր մեղվանոցներն այդպիսի ձմեռոցներ չունեն և պիտի ողտվեն սովորական շենքերից, անհրաժեշտ ենք համարում վորոշ խորհուրդներ տալ ալլ շենքերը վորպես ձմեռոց հարմարեցնելու մասին։

Նախկառաջ պետք ե ասենք, վոր մեր նկարագրած ձմեռոցից հետո այդ նպատակի համար առաջնություն պետք ե տալ նկուղներին, մանավանդ յեթե նրանք կա-

մարակապ են և չոր. մեղուները նրանցում շատ լավ ձմեռում են։

Իսկ յեթե մենք հարկադրված ենք ընտրել մեր գյուղական շենքերից (սենյակի թոնրատուն, մարագ), ապա գերազանցելի լին այն շենքերը, վորոնք հաստ քարե կամ կավե պատեր և քիչ անցքեր ունեն և չոր են. այնուհետեւ վաղորոք պետք ե շենքի կառւը սպաղել, վորպեսզի ջուր չկաթի. վերջինս մեղուների համար ուղղակի կորբատաբեր ե. ապա պետք ե շարել լուսամուտները և խնամքով սվաղել պատերը դրսից և ներսից, կամ գոնե ծեփել ճեղքերը։ Այլ բոլորը պետք ե անել այնպես վաղ, վոր մեղուները ներս քաշելու մոմենտին ձմեռոցը միանդամայն չոր լինի, իսկ յեթե ժամանակին այդ չի արված, ապա պետք ե լուսամուտները դրսից և ներսից տախտակել և արանքը հարդ լցնել։ Դուռը պետք ե խնամքով սարքել և ներսի կողմից պատել հարդ լցրած հաստ մինդարով։ Պեսը և մի ողանցք սարքել դրսից ող գալու համար, թեկուղ դըռան տակով, իսկ մյոււը՝ շենքի հակառակ կողմից, կտրի մեջ՝ ներսի ողը դուրս հոսելու համար։ Ողանցքները պետք ե մթնեցնել (ծնկափոր խողովակներ)։ Այս ձեռք իննամքով սարքած շենքում մեղուները տանելի կերպով ձմեռում են։ 1932-33 թվին Հոռոմի մեղվաբուծական խորհունտեսության 700 թույլ ընտանիքները (միջին թվով 3 շրջանակի վրա) այսպիսի շենքերի մեջ ձմեռեցին չնչին կորստով։ Ջերմաստիճանը + 3.ից ցած չի ջավ, չնայած դրսի—25° ցըրտերին։ Այսպիսի շենքերը պետք ե փեթակներով լիքը լցնել, վորպեսզի տաքություն առաջանա։

Այս կոլտնաւեսականներին, վորոնք իրենց մի քանի փեթակը չգիտեն ինչպես պահել ձմեռը, խորհուրդ կտայինք փեթակները դնել վարեե անընակ շենքի մեջ, ամբողջովին պատել գարմանով, միայն թե անպայման դրսից թարմ ողը

ներհոսելու հատուկ հարմարություն ստեղծել և փեթակի ներսի ողը ծածկով դուրս հոսելու համար (ծակոտկեն ծածկոց, դարձմանով բարձ), վորոնց մասին արդեն ասել ենք: Մեղուները ձմեռն այս ձեռվ պահելու գեպքում, լեթե թարմ ողի ներհոսումը և փեթակի ողի արտահոսումը չի ապահովված ըստ այս ցուցմունքների, մեղուները կարող են փշանալ ողի պակասությունից:

Իսկ զոմերում լերբեք խորհուրդ չելինք տա ձմեռը մեղուներ դնել:

Է. ՄԵՂՈՒՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ ՑԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆԸ ԶՄԵԽՌՈՑՈՒՄ

Ի՞նչպես սարել փերակները ձմեռոց դնելու համար.— Ի՞նչպես արդեն ասել ենք, պետք ե մոմաշորը վերցնել և շրջանակները ծածկել ծակոտկեն կտորով: Մենք անհրաժեշտ ենք համարում բարձր թողնել փեթակի վրա: Ցեթե ձմեռոցը լիովին համապատասխանում է մեր առաջադրած պահանջներին, կարելի լի միջնատախտակներ և տաքացում չդնել, բայց նկատի առնելով՝ մեր անկատար ձմեռոցները, ավելի լավ ե դնել. սրա առավելություններից մեկն ել այն ե, վոր գարնանը դուրս դնելիս մեղուներն արդեն տաքացում կունենան:

Ցե՞րք պետք ե մեղուները ձմեռոց դնել.—Վորքան մեղուները յերկար ողավեն դրսի մաքուզ ողից և հնարավորություն ունենան փեթակից դուրս թռչել և մաքրվել իրենց փորում հովաքված կղկղանքից, այնքան լավ: Բայց յեթե մեղուների ներս դնեն ուշացնեք, կարող են հանկարծ սկսվել անձրեներ և ձյունաբեր լեղանակներ: Ուստի, յերբ արդեն գիշերները ջաւը սառչում ե և լեղամ լինում, մեղուներին պետք ե ներս տանել:

Մեղուները ներս տանելիս և դասավորելիս, վորքան

հնարավոր ե, պետք ե խուսափել նրանց զրգուելուց: Վերցնելուց առաջ փեթակների արկանոցը ցանցապատվում ե կամ բոնվում թղթով. լերբ մեղուները ձմեռոցում արդեն հանգստացել են (հետեւյալ որը), պետք ե արկանոցները բանալ: Մեղուներն ամենից լավ ե տեղափոխել պատրարակով (նասիկալով): Զաքետք ե մեղուները ձմեռոց տեղափոխել սալլերով, վորովինեաև ցնցումներից և թխկթխկոցից կծիկը քանդվում ե և ձմերալին կորուսարը դրանից մեծանում ե:

Զերմասինան.— Մեղվապահի ամենակարևոր հոգը պիտի լինի հետեւ ձմեռոցի ջերմաստիճանին. Նա պետք ե ձմեռոցում անպատճառ ջերմաշափ ունենա և աշխատի նորմալ ջերմաստիճան պահպանել այնաեղ: Ցեթե մեղուները տաքացված են, չպետք ե անհանդուստանալ, յեթե ջերմաստիճանը մի քանի որ զրոյից ցած իջնի: Ձմեռոցը տաքացնելու արհեստական միջոցների չպետք և դիմել, քանի վոր ջերմաստիճանը զրոյից ցած չե, յեթե մինչև իսկ փեթակները տաքացված չեն: Իսկ ծայրահեղ դեպիերում մեղվապահը կարող ե ստիպված լինել ձմեռոցը տաքացնել, բայց չափազանց զգութ պետք ե լինել զերմասինանի սաւ տասնուներից:

Յերբ գարունը մոտենում ե, յեղանակը տաքանում ե, իսկ մեղուները դուրս դնելու հնարավորություն չկա, ձմեռոցում մեղուները կարող են խիստ կերպով տառապել շողից (յեթե ձմեռոցը գետնափոր չե): Այդ դեպքում ամեն հնարավոր միջոցներով պետք ե ուժեղացնել ողափոխությունը, դիշերները զոները բանալ և այլն: Միևնույն ժամանակ պետք ե փեթակների արկանոցները լայն բանալ (համապատասխան միջոցներ ձեռք առնելով միների դեմ) և ձմեռոցում պահպանել բացարձակ մթություն:

Յերբ մեղուները ցրտից կամ շողից չեն նեղվում,

ընկնում են լիտկատար հանգստի մեջ և փեթակում իրենց
այնքան հանդիսատ են պահում, վոր ձմեռոց մտնելիս պետք
ե ուշադրությամբ տկանջ դնես, վորպեսզի հազիվ լսես նը-
րանց խուլ և մեղմ բգվոցը. յերբ փեթակն զգուշությամբ
բաց ես անում, վաչ մեղու յե յերեսում, վոչ ձայն ե լսվում,
կարծես մեղուները հանգած լինեն. իսկ յերբ վերեկից
փշում ես, միքիչ հետո փեթակի խորքից մի խշաց ե լը-
վում: Իսկ յեթե նըանք շոգում են կամ մրտում, ուժգին
կերպով աղմկում են:

Զմեռվա ընթացքում առանց անհրաժեշտության չպետք ե մտնել ձմեռոց. մտնելիս պետք ե ազմուկ և թիկոց չանել: Յեթե մեղվանոցը լավ ե հարմարեցրած, բավական ե ձմեռվա ընթացքում ընդամենը մի քանի անգամ ներս մտնել՝ ստուգելու մեղուների դրությունը: Թե ինչպես պետք ե դասավորել փեթակները ձմեռոցում, այդ արգեն բավական պարզ ե մեր ցուցմունքներից և նկարից: Մի անգամ ևս հիշեցնենք, վոր աշնանից փեթակներն ախպես պետք ե սարքել, վոր մկները չկարողանան նրանց մեջ մտնել: Ձմեռոցում մկների դեմ կարելի յե և թույներ գործադրել: 1935-36 թվի ձմեռը ձմեռոցում մկներին վաչնչացնելու համար մենք վերցրինք ճարպ և հալելով, սուլիմա խառնեցինք (500 գր ճարպին մոտ 30 գր սուլիմա). յերբ ճարպը սառեց, մանր կտորներ արինք և շաղ տվինք ձմեռոցում: թեպետ գեռ վերցնական հետեանքներն ստուգված չեն, բայց արդեն ձմեռոցում մկների դիակներ գտել ենք: Իհարկե, մեղուները դուրս վնելուց անմիջապես հետո, պետք ե թունավորված նյութերը խուամքով հավաքել և վաչնչացնել:

Զմեռոցում մեղուներին կերակրելը. — Աշնանից մեզ-
վապահը պետք է մեղուներին ապահովի լավորակ պաշարի
անհրաժեշտ քանակով, վորն ըստ իր դասավարության ևս

պետք ե համապատասխանի մեղուների պահանջին: Սակայն կարող են լինել հատ ու կենտ ընտանիքներ, վարոնց մեզ վապահն աշխանը ձեռք հասցնել չի կարողացել: Ստուգելու համար՝ մեզուն սոված ե, թե վոչ, պետք ե բանալ-վիեթակը և վերսեից նայել շրջանակների արանքը: Յեթե մեղվի կծիկը շրջանակների խորքում հանդիսաւ նստած ե, կնշանակի նա սոված չե: Իսկ լեթե կծիկը բարձրացնել ե վերև և հասել ե շրջանակների վերի ձողերին, ուրեմն պաշարն պապոված ե և նըանց անհրաժեշտ ե կերակրել:

Պետք և սակայն նկատի առնել, վրա ուժեղ ընտանիք-ները միևնուշն պայմաններում այսպես սեղմ կծիկ չեն կապում և խորը չեն իջնում, ինչպես թույլերը. այստեղ, հիարկե, նշանակություն ունի նույնպես շրջանակի բարձ-ությունը:

Յեթե անհրաժեշտ ե այս կամ այն ընտանիքը կերպեցի, պետք ե տալ կերպակաշաղախ կամ կտոր շաքար, հնչ ձևով վոր առել ենք աշնան խնամքի վերաբերյալ ամփում։

Բոլորովին թույլատրելի չե ձմեռոցում մեզուներին
աքաբաջուր տալ կամ շըշանակները բաժանել և արանք-
ները կնքած շըշանակները դնել. Հաց մեղրը կարելի յե-
նենել միայն շըշանակների վրա, կծիկի դլխին:

Զպեալք ե զտապել մեղունիքին դուրս զնել յեթե նրանք
հմեռոցում իրենց լավ են զգում. բայց իթե նրանք նեղ-
կում են, կամ այնպիսի բացառիկ զեպքերում, յերբ կասկած
լա, թե պաշարը կարող ե չբավարարել ընտանիքներին, պետք
է դուրս զնել, հենց վոր ձյունը հալվի և յեղանակը փոք-
րիշատե նպաստավոր լինի:

Վերջացնում ենք մեր աշխատոթյունը նույն Փիլիպ-
ի խոսքերով։

«Մեղքապահը պետք է հավատացած լինի, վոր վորքան

նա լավ և տաքացնում իր մեղուներին---դրսում են ձմեռում նրանք, թե ներսում, այդ մի ևնույն և—այնքան մեղուները նրան ավելի լավ կվարձատրեն մեղրով՝ հետեւալ տարին։ Յերբեք չի կարելի ձմեռալին կորուստները համարել անխուսափելի, և այն մեղվագահները, վորոնք այդ կորուստների վրա նայում են վորպես անհրաժեշտության, լուրջ կերպով սխալվում են։ Չի կարող մեղվաբուծության զարգացումը տեղի ունենալ իր ամբողջութլամբ, քանի վորչեն նվազեցված մեղուների ձմեռային կորուստները։



Պատիմբագիք՝ Ար. Արդուիսանյան և Շահորին
Տեխ. խմբագիք՝ Վ. Ալեքսան
Սրբազրէք Խ. Արշակունյան

Դլավլ. լիտոր 1104, երտ. № 369, պատ. 592, տիրաժ 8000

Հանձնված և արտադրության 1936 թ. ոգոսառի 81-ին
Ստորագրված և տպագր. 1936 թ. Նոյեմբերի 10-ին։

Գյուղերատի տպարան, Յերեվան Նոյեմբեր 11

ԽՐԱԿԱԳԵՏ Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆՁՆԱՅԻՆ ԱՎԱՐԱՐԱԿԱՆ
ԱՄԱԼՅԻ ԱՅ ՃՈՒ

ՀՀ Ազգային գրադարան



NL0292207

ԳՐԱԴԱՐԱՆ

742

23.141



Խ. ՏԵՐ-ԱՎԱԽՅԱ

ОСЕННИЙ И ЗИМНИЙ
УХОД ЗА ПЧЕЛАМИ

СЕЛЬХОЗГИЭ

1936

ЕРЕВАН